

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԸ. ՏԱՐԻ — 1934

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

ՄԵԽԻԹԱՐԻՍՏԻՆ ԳԻՆԵՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԻ Ի ՎԻԵՆԱՆ ԱՂՆԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՊՅՈՒՆ ԵՆ ԵՆՈՒՄ ԲԱՆԱՍԷՆՆԵՐՈՒ:

Որպէս զի անելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, մեղազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրին է առեւ իրարի համար՝ 1 ֆրանկ տարեկան, կամ ֆրանկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA,"

VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

Հ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պր. Պետրոս Թեյաշեան մեկ տարուան "Հանդէս Ամսօրեայ", կը նուիրէ Պետո Սերեմեան Ընթերցարանին և Պրովիդի:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Խմբագրութեան նշանակումներ):

Արտագրանքի օրէնագիր նորմաներ կողմնօժանութիւնների համար: Երեւան 1933: 80, էջ 114: Գինն՝ 2 ռ.:

Բարանկի Ն. Ն., ԽՍՀՄ. աշխարհագրութիւն: Ա. մաս: Երեւան, Պետհրատ 1933: 80, էջ 824: Գինն՝ 3 ռ.:

Գեղարքունի Գ., Լուրեր քաղթէն: Պարիս 1933: 80, էջ 126: [Հրատ. Հրատ-Սամուէլ գրատան:]

Գիւղական Բիւջէն: Երեւան 1933: 80, էջ 90:

"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLVIII. JAHRGANG — 1934

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. I. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1, 2

ՅՈՒՆՈՒԱՐ — ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԸ. ՏԱՐԻ 1934

Մ Ո Վ Ս Է Ս Գ . Տ Ա Թ Ե Ի Ը Յ Ի Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Կ Ե Ա Ն Գ Ն Ե Ի Գ Ո Ր Ժ Ո Ւ Ն Ե Ռ Ի Թ Ի Ի Ն

ՄԱՀՈՒՄՆ 300ԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

(Շարունակութիւն):

18. ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆԻ ԷՋՄԻԱՍՏԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒՄԱՐԱՅ, ԳԱՆՁԱՍԱՐԻ ԵՒ ՍՍՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ

«Համերաշխութիւն եկեղեցիներու՝ հաւատքի եւ սիրոյ միութեան մէջ» բնաբանն էր Մովսէս կաթողիկոսի, ինչպէս իր գործունէութեան կը զգացուի:


Բնականարար եկեղեցիներու այս համերաշխութիւնը կարեւոր էր ամէնէն առաջ համարուելու եւ միադիպուելու հայ ժողովրդեան մէջ վերահաստատելու: Մէկ էր եկեղեցին, բայց կ'իշխէր հոն երկրպագութիւն շնորհիւ դանազան հովուապետներու, որոնք չէին ճանչնար ճոխութիւն, եւ այսպէս խոչընդոտներ էին ազգային եւ եկեղեցական սուրբ միութեան մէկ զերազոյն հովուապետի բարձրագոյն ճոխութեան ներքեւ:

Ոչ միայն կային հինաւուրց կաթողիկոսարաններ, որոնք կը պարծէին իրենց հինօրեայ ազատութիւններով եւ ինքնիշխան թեմերով, որոնց սահմանը օր աւուր ընդարձակել կը ձգտէին, այլ եւ կային — դեռ կենդանի — կաթողիկոսակիցներ, որոնք հաւասարապէս կը ջանային արժեքներ իրենց իշխանութիւնը: Ասոնցմէ երկուքը, Դաւիթ եւ Աւետիս կ'երեւայ թէ շուտով լռեցին: Դաւիթ, որ պարարտ ծերութեան մէջ կ'ապրէր առանձնացած Փոքրիկիւն գիւղին մէջ, կը գտնուէր Նոր-Ջուղայեցոց ազգեցութեան տակ, որոնք Մովսիսի պաշտպաններն էին. չունէր պատճառ խոչընդոտն յարուցանելու Մովսիսի առջեւ: Յայտնի չէ թէ ի՞նչ համաձայնութիւն կ'ընէր Մովսէս Աւետիս կաթողիկոսի հետ. յամենայն դէպս սա եւս ծերացած էր եւ քաշուած հրապարակէն:

Դժուարին եղաւ լռեցնել իւր փառասիրութեան մէջ վերաւորուած Սահակ կաթողիկոսը, որ փախած Օսմանեան հողին վրայ ի վաստակաւոր, կ'աշխատէր արժեքներ իր իրաւունքները դէթ օսմանեան տիրապետութեան տակ գտնուող ա' յն ազգայիններու վրայ, որոնք դուրս էին Սոյ եւ Աղթամարի թեմերէն եւ կը պատկանէին էջմիածնի թեմին: Ինչպէս տեսանք վերագոյն, այս շատ վտանգաւոր ձեռնարկութեան առաջն առնելու համար ոչինչ խնայեց Մովսէս սիրով եւ խաղաղութեամբ զիջողութեան յորդորելու իւր հակառակորդը: Թէպէտ շատ ցաւալի եղաւ Սահակի շարաշար պարտութիւնը, բայց խափանուեցաւ ասով էջմիածնի թեմին երկփեղկումը:

Աղթամար: Մովսէս կաթողիկոսի նուիրակն Փիլիպոս, որ 1629ին կը շրջէր վաստակաւոր, կ'երեւայ թէ ունէր կաթողիկոսին մասնաւոր յանձնարարութիւն ոչ միայն Սահակ կաթողիկոսին հետ բանակցելու, այլ եւ մտնելու Աղթամարայ Ստեփանոս կաթողիկոսի (1616—1654) հետ բանակցութեան մէջ խաղաղական ճանապարհով բանալու երկար տարիներու վէճը, որ կար — յատկապէս թեմական հողերու շուրջը — էջմիածնի եւ Աղթամարի միջեւ:

Վէճը լուծուեցաւ: Աղթամար ճանչցաւ էջմիածնի Աթոռին գերիշխանութիւնը եւ էջմիածնի զիջեց, որ Աղթամարայ Աթոռը շարունակէ իւր կաթողիկոսական տիրոջը իւր սեպական թեմին մէջ, որուն սահմանները ճշդուեցան: Այս մասին մեր միակ աղբիւրն է Նիկողայոս զրջի յիշատակարանը, գրուած 1632ին Մաշտոցի մը վերջը. «Ի թվականութեան Հայոց ՌՁԱ. . . ի հայրապետութեան Հայոց էջմիածնայ տեանն Մովսէսի . . . եւ մերոյս Աղթամարայ տեանն Ստեփանոսի, որ երարձ գիրնիմն անհնազանդութեան եւ եղի հիւ՛ Եւ հպատակ լուսանկար եւ գրիգորաշէն սուրբ էջմիածնայ եւ էառ գորհնութիւն Լու-



սաւորչին ի գլուխ իւր եւ ի ծոց դուզնաբեայ փոքրիկ հաւտին իւրոյ . որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ ազօթիւք սուրբ Լուսաւորչին նոր հնազանդեալ որդիացելոցս ողորմեացի Գրիգորոս Աստուածն մեր» :

Այս մասին է հաւանօրէն Սիմէոն Սոսոյ կաթողիկոսին ակնարկութիւնը առ Փիլիպպոս կաթողիկոս գրած թղթին մէջ : Սիմէոն կը գրէ . «Դուք ընդէ՞ր զԱղուանից տունն յափըշտակեցիք, զոր ի ձեր թուղթն գրեալ էիք, թէ ինքն(ա)գլուխ աթոռ է ի սուրբ Լուսաւորչէն կարգեալ : Նոյնպէս եւ զԱղթամարայն ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք, որ ԵձԻԶ (526) տարի է, որ ինքնագլուխ կաթողիկոսք են . թէպէտ զերք կու պարսաւեն : Տե՛ս, ե՞ս եղայ յարող տուն առ տուն, թէ դու 'ուսելով զտունս այրեաց, . . . »<sup>1</sup> :

Աղուանք : Կը տեսնուի Սիմէոն կաթողիկոսի վերոյիշեալ տողերէն, թէ Մովսէս նաեւ Աղուանից հետ մշակած է բարեկամական յարաբերութիւններ, որոնց պտուղն քաղեց սույա Փիլիպպոս կաթողիկոս<sup>2</sup> :

Սիւ : Պէտք է ենթադրել թէ Մովսէս կաթողիկոս նաեւ Սոսոյ Աթոռին հանդէպ սիրով աղբաժ ըլլայ : Այս մասին կը պակսի մեզի ժամանակակից աղբեր : Ուշադրութեան արժանի է այս տեսակէտով Գրիգոր Գարանաղցոյ հետեւեալ տեղիքը (էջ 335), ուր կ'ըսուի թէ Սոսոյ Մինաս կաթողիկոս († 1632) «կամեցաւ զնալ յեջմիածին ուխտի պատճառաւ եւ տեսանել զկաթողիկոսն Մօսէս՝ զերկրորդ լուսաւորչին արեւելեան եւ զամենայն անպատար միանձունն, վասն զի սիրող էր այնպիսի վարուց եւ կարգաւորութեանց, եւ գնաց մինչ ի Կարին . . . եւ ոչ գիտեմ թէ զի՞նչ գրուեցին չարին սիրողքն եւ բարոյն ներհակքն եւ փոշիմանցուցին եւ անգրէն ընդ կրունկն յետս դարձուցին» :

Մինաս կաթողիկոսի այս բարի տրամադրութիւնը կարծել կու տայ թէ Մովսէս եւ Մինաս կաթողիկոսներու մէջ կանխաւ փոխանակուած էին սիրոյ նամակներ : Մովսէսի ջանքերուն հետեւութիւնը պէտք է համարել 1638ին Երուսաղէմ կայացած համաձայնութիւնը, որուն մասին կը գրէ Սաւալանեան (Պատմութիւն Երուսաղէմի, Ա., էջ 287—288) . Այս տարի «Երուսաղէմ կու գայ Սիսի Սիմէոն կաթողիկոսը՝ հետը ունենալով Ներ-

<sup>1</sup> Արարատ, 1904, էջ 381 . հմտ. իմ Գաւաղանա-զերք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 29 :  
<sup>2</sup> Հմտ. Ջամբո, 79 :

սէս վարդապետը եւ ուրիշ եկեղեցականներ : Եւ որովհետեւ նախկին կաթողիկոսներու օրերէն սկսեալ գծաութիւն ինկած էր էջմիածնի ու Սիսի աթոռներուն միջեւ՝ ձեռնադրութեանց պատճառաւ, զոր կը կատարէին երկու հայրապետները՝ հակառակ իրենց յատուկ թեմական իրաւունքներուն, Գրիգոր պատրիարք կը յորդորէ մէջտեղէն վերջնել ատելութեան պատճառները, որոնցմով եկեղեցին շատ մը անկարգութեանց կը մատնուէր : Ուստի ժողով կը գումարեն ներկայ բոլոր եկեղեցականներն ու երեւելի աշխարհականները : Սիմէոն իր ձեռագիրով կը խոստանայ իր վիճակին չարատկանող եպիսկոպոսներ ու քահանաներ չձեռնադրել այլ եւս . նոյնպէս, կ'ըսէ, էջմիածնի կաթողիկոսն ալ իր վիճակէն դուրս ռեւէ մէկը պէտք չէ ձեռնադրէ : Եթէ իր եկեղեցականներէն մէկը մեր վիճակը գալու ըլլայ՝ հերասիրութեամբ մեծարուի ու կամաւոր նուէրներ ժողովուրթոյ լատրուի . նմանապէս մերիններն ալ եթէ էջմիածնին վիճակները երթան՝ նոյն սիրով եւ նոյն պատիւով ընդունուին : Գալով եկեղեցական արարողութեանց՝ երկու աթոռներէն ոչ մէկը չհամարձակի ընդունուած կարգէն դուրս փոփոխութիւններ մտցնել անոնց մէջ» :

Կ. Պալիս : Նաեւ կաթողիկոս ընտրուելէն ետքը շարունակեց Մովսէս թղթակցել իւր ուսուցչին՝ Գրիգոր Կեսարացոյ հետ, որ մեծ ձոխութիւն կը վայելէր արեւմուտք, նաեւ պատրիարքական աթոռէն զրկուելէն ետքը : Այս միջոցին պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր Ջաքարիա Վանեցի (1626—1633) : Սա ի սկզբան պաշտպանեց Սահակ կաթողիկոսի տարապայման խորհուրդը . թէ անոր ձախողելէն ետքը ինչ գիրք բռնեց Մովսէս կաթողիկոսի հանդէպ, որ աշակերան էր Ջաքարիայի հակառակորդ Գրիգոր Կեսարացոյ, յայտնի չէ . բայց պիտի տեսնենք քիչ յետոյ, թէ Մովսէս կաթողիկոսի եւ Ջաքարիայի տեսակէտները նկատմամբ միութեան, որոնք կը զայրացնէին Գրիգոր Կեսարացին, կ'ընդգրկէին գիրար :

19. ԼԵՀԱՀԱՅՈՅ ԽՆԴԻՐՔ — ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Այս խնդիրներու մասին մանրապատուժ գրած է Առաքել Դաւրիժեցի . գլխ. ԻԸ, էջ 363—389 : Առաքել հաւաքած է իւր տեղեկութիւնները կաթողիկոսարանի դիւանին թղթերէն, Սաշատուր Կեսարացոյ զեկուցումներէն



եւ էջմիածնին երթեւեկող պատգամաւորներու հաղորդագրութիւններէն : Իրրեւականատեսէ գրի առնուած վաւերագիր կարելու է իրաց լուսաւորութեան համար Սիմէոն Լեհացոյ մէկ Յիշատակարանը էջմիածնի Թ. 1004 ձեռագրին մէջ : Այս Յիշատակարանը միաժամանակ կուսան կը ծառայէ մեզի Սիմէոն զպիր Լեհացին ճանչնալու հեղինակ այն սկիզբն եւ վերջը պակասաւոր ոտանաւոր գրութեան, զոր հրատարակած է Հ. Ղ. Ալիշան «Վիպասանութիւն Նիկոլական» խորագրի տակ, Կաթեւնից, էջ 202—214 : Այլուր մտադիր եմ տալ այն ապացոյցները, որոնք կը մղեն զիս Սիմէոն զպիր ընծայելու վիպասանութիւնս :

Ալիշանի Պիղու, որ գրի առած է Նիկոլայոս Արքեպիսկոպոսի եւ Լեհացոյ կաթողիկէ Եկեղեցոյ հետ Միութեան պատմութիւնը, երկրորդարար միայն խօսած է 1626—1634 տարիներու դիպաց մասին, որոնք հոս առաւելապէս նկատի պիտի առնուին : Ա. Պիտաւելապէս նկատի պիտի առնուին : Ա. Պիտաւելապէս հայերէն թարգմանութիւնը հոգուի դործին հայերէն թարգմանութիւնը՝ գաց Կ. Նդեան . հմտ. իր աշխատութիւնը՝ Խոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցոյն Հոովմայ : Ժամանակակից յիշատակարանք : Պետերբուրգ 1884 :

Ինձ աւելի վստահելի աղբեր կը թուին Սիմէոն զպիր հաղորդագրութիւնները . ուր Սիմէոն թէ՛ իրրեւականատես եւ թէ՛ իրրեւանաշատ եւ անկողմնակալ տեղեկատու երեւան կու գայ :

Ունիմ աչքի առաջ նաեւ այլեւայլ վաւերագիրներ Հոովմի Տարածման Հաւատոյ Ժողովի Դիւանէն, ընդօրինակութեամբ Գերապ. Պ. Գօյունեան Արքեպիսկոպոսի, որոնք իրրեւ լուսատու ջահ կը լուսաւորեն ժամանակակիցներու հաղորդած տեղեկութիւններու ստուերոտ կողմերը :

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1626ին Մայիս 25ին<sup>1</sup>, երբ կը հասնէր Մելքիսեղեկ կաթողիկոս Լվով, դեռ նոր էր վախճանած տեղոյն արքեպիսկոպոսը Մեսրոպ Կաֆացի († 1625) : Յաջորդին ընտրութեան համար դեռ չէր կայացած որ եւ է որոշում :

Կաթողիկոսը առաջարկած էր անհովիւ

<sup>1</sup> Relatio brevis causae inter Armenos disunitos ex una et R<sup>um</sup> D. Nicolaum Torosovicum Archiep<sup>um</sup> nationis eiusdem in Regno Poloniae et Provincia Valachia parte ex altera, ի Դիւանին Տարածման Հաւատոյ Ժողովին, Armeni 293, p. 210. Ի յաջորդս պիտի յիշեմ գրութիւնս Relatio brevis համապատմութեամբ :

հօտին հովիւ նշանակել կամ զՅովհաննէս Վ. Կ. Պոլսեցի, կոչուած Խուլ, եւ կամ զՋաքարիա Բեռնարդովիչ . բայց յանձն չէին առած անոնք այս պաշտօնը<sup>2</sup> :

Կար ի Լվով Թորոսեցի «մեծագլխի եւ փարթամ»<sup>3</sup> տնէն Նիկոլ անուն զպիր մը, որ երթալով Կ. Պոլիս ձեռնադրուած էր Յովհաննէս Խուլ պատրիարքէն արեղայ<sup>4</sup> : Սա լսելով թէ Մելքիսեղեկ Լվով կը գտնուի եւ պատրաստ է դոյզն գումարի փոխարէն տալ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն, կը փութաց հասնել Լվով եւ կը մտնէ կաթողիկոսի քով «յաշակերտութիւնս» :

«Իրրեւ ամիսք քանի մ'անցին,  
Մելքիսեթն ասաց Նիկոլին .  
Քանի՞ հարիւր մառչիլ տաս ինձ,  
Ջեբզ առաջնորդ դնեմ Լովին» :

Նիկոլ գիմեց իւր աղաղկաններուն, որոնք խոստացան իրեն իրենց դրամական աջակցութիւնը : Միարանեցան ձեռնադրութեան համար տալ կաթողիկոսին 150 դուռուլ<sup>5</sup> հաս : Թիկնածուն 23 տարեկան հասակի մէջ էր, «մանուկ տիօք եւ տգէտ մտօք, խաւարեալ խորհրդով եւ անիմաստ հանձարով, անուղղայ վարուք, վատ եւ ապիրատ յամենայն իրս եւ ի դործս, լիբր, անղգամ եւ յանդուլն»<sup>6</sup> :

Թիկնածուն այս յոռի յատկութիւններուն ծանօթ ժողովուրդը, փութաց նախապուշացնել կաթողիկոսը .

«Չըլինի թէ զնա օրհնես մեզի,  
Թէ չէ նա շատ աղմուկ լինի» :

Հակառակ այս նախազուլացուցիչ ազդարարութեան՝ Մելքիսեղեկ գնաց քաղաքի պարիսպներէն դուրս գտնուող Հաճկատար վանքը, ձեռնադրելու եպիսկոպոս վանքին միարան Նիկոլ արեղան : Ձեռնադրութեան աւարողութիւնը սկսաւ գիշերաժամին, «ի ներկայութեան բաղմաթիւ կղերականներու եւ աշխարհականներու»<sup>7</sup> :

<sup>2</sup> Անդ :  
<sup>3</sup> Ձեռ. էջմ. 1004, թղ. 190 r :  
<sup>4</sup> Վիպասանութիւն, էջ 203 .  
Որ ի Ստամբուլ ելեալ զընաց,  
Մըտաւ ի կարգն արեղայ :  
Համեմատէ նաեւ էջ 211 . ուր Յովհաննէս Խուլի բերանը կը դուրս խօսքերս նկատմամբ Նիկոպոսոս եպիսկոպոսի .  
Թէ պարոնտէրն է իմ որդին . . .  
Սա իմ օրհնածս է եւ չըբախ իմ :  
<sup>5</sup> Վիպասանութիւն, էջ 203 :  
<sup>6</sup> Ձեռ. էջմ. 1004 :  
<sup>7</sup> Relatio brevis.

Լուրը հասաւ քաղաք. արձկեցաւ ժողովուրդը. բազմութիւն մը գերեւախառն դիմեց վանք, խափանելու ձեռնադրութիւնը: Բայց Կաթողիկոսը խաղաղեց ժողովրդեան բարկութիւնը՝ հաւատարմացնելով թէ ինքը մտադիր է նորընծայ եպիսկոպոսն իրեն հետ առնել տանիլ: Այսպէս կրցաւ յաւարտ հանել ձեռնադրութիւնը: Արդեամբք ալ անմիջապէս նորընծային հետ մեկնեցաւ Լվովէն Եազովցոյի ճանապարհով հասնելու Կամենից: Երբ հասան Եազովցա, յայտնեց կաթողիկոսը Նիկոլին, թէ ինքը կատարած է արդէն իւր յանձնառութիւնը. ուստի եւ կարող է եպիսկոպոսն երթալ իւր թեմը: Նիկոլ առարկեց ժողովուրդին գայրոյթը: Մեքիսեղեկ ընձեռնեց եպիսկոպոսին ձեռնադրութեան հաստատագիրն, որով կը հաստատէր նորընծային իւր աթոռին վրայ իրբեւ առաջնորդ Լվովի եւ կը նշովէր եւ կը կապէր այն ամէնքը, որոնք կը համարձակէին հակառակիլ իւր հրամանին կամ ընդդիմանալ եպիսկոպոսին: Կոնդակս տրուած է 1626, Գեկտեմբեր 29ին<sup>8</sup>:

Նիկոլ եպիսկոպոս վերադարձաւ Լվով եւ ցոյց տուաւ ժողովրդեան կոնդակը: Բանադրանաց սպանալիքը լռեցուց ժողովրդեան բարկութիւնը. «թէպէտ Հայերէն ոմանք ըմբոստացան, բայց յետոյ միաբան հաւանութեամբ ընտրեցին զանիկա իրենց հովիւ, ինչպէս կը վկայէ այն հաստատագիրը, զոր 1626ին կնքեցին հայ Երեսփոխանները<sup>9</sup>» Երեսփոխանները անմիջապէս ներկայացուցին թագաւորին խնդրագիրը, հաստատելու նորընծայի առաջնորդին ընտրութիւնը: Սիկիս-

<sup>8</sup> Կոնդակս իսկապէս կը պահուի այժմ Վենետիկի Միսիթարեանց Գրեանին մէջ. Հ. Վ. Տայեան յառաջ կը բերէ անկէ հետեւեալ տեղիքը. «Ձի եկաք ի յայտ տեղս օրհնեալ մայրաքաղաքն Իլով, իրբեւ ի յաթոռակալ տեղ. եւ տեսաք որ առաջնորդ չունէին. եւ բազում ժամանակս առանց առաջնորդի վարէին զկեանս իւրեանց. բազում անգամ մեզնէ առաջնորդ խնդրէին յիմ եպիսկոպոսաց. բայց ոչ կամեցայ զիմ եպիսկոպոսքն այս տեղս առաջնորդ դնել: Վասն որոյ ըստ ինդրոյ նոցա քննութիւն արարաք ի միջի մերում եպիսկոպոսիք. եւ ձեռնադրեցաք զՏէր Նիկողայոսն այստեղացի, Պարոն Եազովի որդին թորոսնց. եւ օրհնեցաք եպիսկոպոս մեր բարձր հայրապետական իշխանութեամբս...: Օրհնեցաք զՏէր որդին մեր զտէր Նիկողայոսն արքեպիսկոպոս Լովա քաղաքին... Գրեցաւ թվ. Ռ. 26. Գեկտ. ամսոյ Իթ. ձեռամբ մեզաւոր գրէր իւր քանքարոյ պարտական Սիմոն լուխանոս իրեցուիս: (Ստ.) Տեսնոն տէր Մեքիսեղ կաթողիկոս ամենայն Հայոց ծառայ Յիսուսի Քրիստոսի սովի գոյս զիրս. ձեռագիր այս է»: Հմմտ. Բագմաշէպ, 1921, էջ 397—398, ծան. 2: Ունիմ առջեւս Կոնդակս լատիներէն թարմամբեան պատճենը. տե՛ս Relatio brevis, էջ 188—191:

<sup>9</sup> Relatio brevis. Հալուութեան բանաձեւը յառաջ բերուած է լեհերէն բնագրով:

մունդ Գ. ի հաստատագիրը կը կրէ 29 Մարտ 1629 թուականը<sup>10</sup>:

1627 տարին անցաւ առանց միջադէպի:

ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՅԻ

Յաջորդ տարին Կամենից կը ժամանէ Գրիգոր Վ. Կեսարացի, հաւանօրէն ուղարկուած Մովսէս «լուսարարէն» ի նպաստ էջմբիածնի նուիրակութիւնը ընելու<sup>11</sup>: Նոյն օրերը Նիկոլ եպիսկոպոս ի Կամենից արեղայ ձեռնադրած էր Ոնտիբրիոս անուն մէկը, որ յառաջ Ուաչքօ կը կոչուէր: Նորընծայ արեղան իւր քառասունքի առաջին տասներկու օրերը հազիւ իւր ետեւն ունէր, երբ հրաման ընդունեցաւ եպիսկոպոսէն մատուցանել իւր առաջին պատարագը: Կը հրաւիրուի պատարագին ներկայ ըլլալու նաեւ Գրիգոր Կեսարացի: Բայց նա կը հրաժարի հրաւերէն, յայտարարելով թէ հայ եկեղեցւոյ կանոններու հակառակ է քառասունքը լրանալէ յառաջ պատարագելը: Եպիսկոպոսը կը լռէ. պատարագը կը յետաձգուի: Յաջորդ կիրակի միևսանգամ հրամայեց նորընծային ելլել պատարագի: Գառասունքը չէր աւարտած: Եւ որպէս զի զգալ տայ Վարդապետին, թէ կը գտնուի օտար թեմի մէջ, ուր չունի իրաւունք թեմականին գործերու մէջ խառնուելու, անխոհեմարար գնաց առաւօտ կանուխ եւ փակեց այն եկեղեցւոյն դուռը, ուր իջեւանած էր վարդապետը, եւ բանալին առաւ հետը: Ասկէ բնականաբար «յոյժ վշտացաւ Վարդապետն»<sup>12</sup> եւ զբզուուած՝

Յանդիմանեաց զնա յատենին.  
Վասն է՞ր քակեա դու զկարգն հային,  
Ունկն չդնես դու կանոնքին,  
Ուրտիւն էր մեր սահմանին,  
Հարցէ զքեզ օձն անջրբոյն<sup>13</sup>:

<sup>10</sup> Ամբողջութեամբ յառաջ բերուած լատիներէն բնագրով Relatio brevis: Այս թուականէն սկսեալ կը ստորագրէ. «Ես Նիկոլ Պր. Եազովի որդի, մականունամբ թորոսովից, Աստուծոյ ողորմութեամբ արքեպիսկոպոս եւ յաթոռակալ Հայոց Լովա եւ ամենայն Լեհաց աշխարհի եւ Պոդոլանաց երկրի... Ի... Կամենից... թվ. Հայոց Ռ. 26. Օղորտոսի Ա. օրն Բ. չի»: Տաշեան, Յուլ. Միսիթ., էջ 692: Հմմտ. եւ անդ էջ 630 («Նիկողայոս թորոսեանց...»), եւ Սարգիսեան, Յուլ. Միսիթ. Ա., էջ 410 («...արքեպ. Հայոց եւ յաթոռակալ եւ վարդապետ Լովա»):

<sup>11</sup> «Գրիգոր Վ. Կեսարացի 1627ին Յովհ. Ունկն աթոռէն տապալելէն ետեւ՝ փութաց էջմբիածնի եւ անկէ Լեհաստան՝ Նիկողայոսի գէմ կոտելու» կը գրէ Հ. Գ. Գալէմբարեան, Կենսագրութիւններ երկու Հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու. Վիեննա 1915, էջ 29: Ինձի ծանօթ չէ այլուստ Կեսարացւոյ էջմբիածնի ուղեւորութիւնը:

<sup>12</sup> Գալէմբարեան, էջ 368:  
<sup>13</sup> Վիպասանութիւն, էջ 205:

Եւ, ինչպէս Դաւրիթեցի կը գրէ, յայտարարարեց բարկութեան մէջ, թէ «այն մարդն անիծեալ լինի, որ այսօր զնայ յայն եկեղեցին»:

Պատարագը տեղի ունեցաւ: Աւարտելէն ետքը փակեց եպիսկոպոսը եկեղեցւոյն դուռն եւ գնաց: Այսպէս փակուած մնացին Կամենիցի երկու եկեղեցիները Յայտնութեան աւագ տօներու օրերուն (4 Յունվ. 1629), Կիր. ըստ Նոր տոմարի = 25 Գեկտ. 1628, Եւ. ըստ Հին տոմարի):

Երկու դռնոց դէմքեր բախած էին իրարու: Կեսարացին ի բնէ ահեղ, կամապաշտ եւ խտտապահանջ, յեցած իւր հոգեւորած ճոխութեան վրայ, կը սաստէր, կը յանդիմանէր վարդապետական բոլոր իշխանութեամբ, առանց անդրադառնալու թէ կը գտնուի լեհական հողի վրայ եւ ոչ ի թուրքիս: Իր դէմ ունէր եպիսկոպոս մը թագաւորական հաստատագրով, տաքլուխ երիտասարդ մը, յանդուգն, նոյնպէս կամապաշտ, ոչ մէկ միջոցի առջեւ պատկառով:

Կեսարացւոյն յոխորտանքը թուրացներու համար գնաց Նիկոլ նոյն օրը Կամենիցի Վոյթին՝ Լուկաշին եւ չարախօսեց վարդապետի մասին, ամբաստանելով զինքը իրբեւ լրտես:

Ասաց. Չաչուտ՝ թուրքն եկած,  
Խոռովեցուցիչ եւ մեծ հերձուած:

Պահանջեց Վոյթին, որ թոյլ չտայ վարդապետին չրջիլ Լվով կամ ուրիշ քաղաքներ. այլ հեռացնէ Լեհական սահմաններէն: Ժամանակ մը քաղաքին մէջ արգելափակուած մնալէ ետքը բռնեց Կեսարացին դարձի ճանապարհը: Իսկ Նիկոլ վերադարձաւ Լվով:

Անարգանքը, որ եպիսկոպոսի կողմէն հասած էր Կեսարացւոյն, չափազանց ծանր էր: Երբ տակաւին Ռուսմանական հողի վրայ կը գտնուէր, զրեց Կեսարացին լի դառնութեամբ «բանադրանաց, նղովից եւ կապանաց գիր մը» Նիկոլի հասցէին եւ ուղարկեց Լվով: Սիմէոն դպիր կը գրէ (էջ 206):

Իրբեւ ամիս ու կէս անցին,  
Գրիգորէն բանադրանք բերին.  
Նօթին թիզ էր թուրքն որ արվին.  
Շատ նղովք ու անէճք կայր միջին:

Միաժամանակ զրեց Կեսարացին ընդարձակ զեկուցում մը այս անցուղարձերու մասին եւ ուղարկեց Մովսէս կաթողիկոսին<sup>14</sup>:

<sup>14</sup> Դաւրիթ. 369. «այլ եւ Գրիգոր վարդապետն գա-

Առ. Դաւրիթեցի կ'աւելցնէ թէ նաեւ Մովսէս կաթողիկոս զրեց «գիր բանադրանաց եւ առաքեաց ի վերայ Նիկոլ եպիսկոպոսին»: Բայց ուղիղ չ'երեւար Դաւրիթեցւոյ այս տեղեկութիւնը. ժամանակակիցները այս մասին որ եւ է յիշատակութիւն չեն ըներ. դարձեալ այս միջոցին Մովսէս զեռ Պարսկաստան կը ղեզերէր. եւ ընդհանրապէս այսպիսի յախուուն քայլ մը անմիաբան պիտի ըլլար Մովսէսի բնաւորութեան, որ գիտէր նման դէպքերու մէջ ընթանալ իմաստուն եւ խոհեմ ընթացքով: Ինչպէս Կաթողիկոսին առ Ուրբանոս Ը. գրած թուղթէն կը տեսնուի, Մովսէս կանչած էր զՆիկոլ իր քով:

Կեսարացւոյ բանադրանաց գիրը ահաւոր իրարանցում պատճառեց ի Լվով, ուր ժողովուրդը տօգոհ էր արդէն իւր առաջնորդէն: Իսկ եպիսկոպոսը արհամարհեց անոր սպառնալիքներն ու նղովքները:

Չբանադրանքն նորա չբռնեց.  
Չթուղթն ի յանարդ տեղի ձգեց.  
Յեկեղեցին համարձակեց,  
Առջեւ խորանին աղօթեց:

Բայց ոչ այսպէս ժողովուրդը: Մասամբ զրգուուած եպիսկոպոսի հակառակորդներէն եւ մասամբ վախնալով վարդապետին բանադրանքին սկսաւ ժողովուրդը տակաւ տակաւ հեռանալ եպիսկոպոսէն եւ չյաճախել եկեղեցին:

Որպէս զի խաղաղութիւնն վերահաստատուի եւ ժողովուրդին խիղճը հանդարտի, խորհուրդ տուին իմաստուն մարդիկ եպիսկոպոսին, որ երթայ անձամբ Կեսարացւոյն եւ բանադրանքէն արձակուի խնդրէ: Ժողովուրդը յանձն առաւ հոգալ ճանապարհի ծախքը: Նիկոլ մեկնեցաւ զէպի Կեսարիա, ուր կը գտնուէր Վարդապետը: Հասնելով Պրուսա, պատահեցաւ հոն Արիստակէս Վ. Խարբերդեցւոյն, որ Կեսարացւոյ հակառակորդներէն էր: Սա խօսեցաւ տեղի եւ անտեղի Կեսարացւոյ դէմ. նուաստացուց անոր բանադրանքին արժէքը. եւ ամէն միջոց բանեցուց, որպէս զի ետ պահէ եպիսկոպոսը երթալու եւ իշխալու վարդապետին ոտքը: Իւր փառասիրութեան մէջ վերաւոր եպիսկոպոսին հա-

մենայն որպիսութիւն անցուածոցս այսմիկ, այլ եւ զանուղայ վարս Նիկոլին թղթով ծանուց Մովսէս կաթողիկոսին ի սուրբ էջմբիածնի, եւ խնդրեաց ի նմանէ, զի եւ նա բարձր հրամանաւ Ս. էջմբիածնի եւ կաթողիկոսական իշխանութեամբն բանադրեցէ զՆիկոլ եպիսկոպոսն»:

մար հաճելի էր լսել Սարգսի լուրերը իրատր: Որոշեց չեթալ յառաջ: Որպէս զի առ երեւոյթս փրկէ կացութիւնը, խորհեցաւ խօթապատճառ երեւալ. գրեց Կեսարացոյն չքմեղանքի գիր մը, թէ ճանապարհին հիւանդանալով պիտի չկարենայ դուրս գալ Պրուսոյէն. ուստի եւ կը խնդրէ իրմէ, որ գրով արձակէ զինքը կապանքէն: Կեսարացոյն հաւատ ընծայելով զզջացեալին խօսքերուն, կ'արձակէ զինքը բանադրանքէն գրով:

Նիկոլ ուրախացած իւր յաջողութեան վրայ կը վերագառնայ Լվով. եւ կը ներկայացնէ ժողովրդեան վարդապետին արձակման գիրը:

Սկսած էր խաղաղիւ հրապարակը, երբ յանկարծ կրկին խռովեցաւ:

Կեսարացոյն վերահասու ըլլալով, թէ Նիկոլ Արիտասկէս վարդապետի սաղբանքով չէ ուզած իյնալ իր ոտքը, եւ կեղծեօք հիւանդ ընծայած է ինք զինքը, փութացած էր լուր հասցնել Լվովցիներուն, թէ «նոյն առաջին նգովքն եւ բանադրանքն տակաւին կայ ի վերայ այդ եպիսկոպոսիդ»:

Սիմէոն դպիր կը բացագանչէ այս առթիւ (էջ 206):

Այս էր պատճառն առաջին,  
Որ սկիզբն եղեւ ամէն շարին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՅԻ

Երկպառակութիւնն առաջնորդին եւ ժողովրդեան մէջ կը շարունակուէր դեռ, երբ հասաւ Լվով, 1630, Սեպտեմբեր 20ին, Սաշատուր Կեսարացի<sup>15</sup>: Ասիկա Մովսէս կաթողիկոսի «մեծ աշակերտն» էր, կարգուած Նոր-Ձուղայի առաջնորդ: 1630ին կանչած էր զինքը կաթողիկոսն իր մօտ եւ յանձնած իրեն Փոքր Ասիոյ, Սրբի եւ Լեհաստանի նուիրակութիւնը. անչուտ միաժամանակ նաև Նիկոլ եպիսկոպոսի հարցին քննութիւնը:

<sup>15</sup> Վիեննայի Կայս. Մատենադարանի, Թ. 16, շաշուցի մէջ (Տաշեան՝ Ցուցակ, էջ 24) կ'արձանագրուի. «ԹՎ. ՌՉԹ. Սեպտ. Ի. օրն երկուշաբթի... Եկաւ ի Լով նուիրակ տէր Սաշատուր վարդապետ սրբալոյս մեծանուն եւ զիս մեկուորս Սաշատուր արեգաս առաքեաց նուիրակ սրբալոյս մեծանուն ի յայս աստուածապաշտ քաղաքն Ձամոսցա»: — Սաշատուր վարդապետ իրեն հետ ունէր զԳրիգորիս վարդապետ եւ զՍիմէոն Ձուղայեցի: Էջմ. Թ. 3099 ձեռագրին մէջ, թիւ 121 ա կը կարգամ. «Յայսմ ամի Եկն ի Լեհ նուիրակ տէր Սաշատուր արեւ եւ քաջ բարունակեան ի տեսան տէր Մովսէս կաթողիկոսէ, ընդ նմին եւ հարազատ բեռորդին հոգեւոր տիրոջն նմանալ նմին աստիճանի վարուցն ճգնադրեաց եւ խտասիրօն տէր Գրիգորի(ս) կրօնաւոր բանասէրն»:

Ճանապարհին հանդիպած էր Սաշատուր իւր հայրենիքը Կեսարիա եւ տեսակցութիւն ունեցած Գրիգոր Կեսարացոյ հետ: Որովհետեւ գիտէր Գրիգոր, թէ Սաշատուր պիտի այցելէ նաև Լեհաստան, այս պատճառաւ «բազում բանս հրամայականս պատուիրեաց Սաշատուր վարդապետին, թէ ի հասանելն քո յիւով (Լվով)՝ մի՛ գուցէ թէ ընկալցիս զՆիկոլն ի կարգ եւ ի պատիւ եպիսկոպոսութեան»:

Այսպէս արդէն «ունէր ոխ չար ի սրտի»<sup>16</sup> հանդէպ Նիկոլի, երբ ոտքը կը դնէր նուիրակը Լեհական սահմանէն ներս: Այս պատճառաւ ալ յիշելով նուիրակին գալուստն ի Լվով կը գրէ Սիմէոն դպիր (էջ 207):

Գարձեալ Հայոց փորձանք Եկին,  
Ա՛յլ առաւել քան գառաջին:

Եպիսկոպոսը երբ լսեց թէ կաթողիկոսին նուիրակը՝ Սաշատուր Վ. Կեսարացի մեկնած է Կ. Պոլսէն եւ կը մերձենայ Լեհական սահմանները, «աւուր մի ճամբայ նմա ընդ առաջ» զնաց ի յարգանս «եւ էր նմա յոյժ խոնարհած»:

Նուիրակը ի սկզբան սիրով եւ մեղմութեամբ կ'ընթանար Եպիսկոպոսին հետ. ի միասին կ'ուտէին, ի միասին կ'իջնային Եկեղեցին, դասուն մէջ ի միասին ունէին իրենց տեղը եւ աղօթակից էին իրարու: Չէր երեւցըներ թէ «ունէր ոխ չար ի սրտէ» թեւադրութեամբ Գրիգոր Կեսարացոյ:

Եպիսկոպոսի հակառակորդներն սակայն տակաւ տակաւ հասցուցին իրենց ձեռքերը վէրքին. սկսան բամբասել առաջնորդն եւ զրգուել նուիրակը անոր դէմ:

Իսկ նրվիրակն Եղիւլին  
Հաւանեցաւ խօսաց նոցին.  
Չասել աղօթք առջեւ խորնին:

Նուիրակին այս յանկարծական փոփոխութիւնը զայրացուց եպիսկոպոսը. որ նաև այս անգամ փորձուած հնարադիտութիւնը բանեցուց. զնաց կառավարութեան եւ ամբաստանեց նուիրակը, թէ Կ. Պոլսէն եկած է լրտեսելու ի նպատակ թուրքին: Այս ամբաստանութեան առջեւ մեծ կաշառքով միայն կրցաւ արդարացնել ինք զինքը Սաշատուր: Երբ երեւան ելաւ թէ Նիկոլն է վարդապետը մատնորը, զրգուած ամբոխը զիմեց նուիրակին եւ զրով պահանջեց թէ անյայտ «ա՛ռ զկարգ

<sup>16</sup> Վիպասանութիւն, էջ 205:

Նիկոլին»։ Եւ թէ պատրաստ ենք մենք դրամական ուժով «հաւասար գետնին» ընել զանիկա: Սաշատուր քաջալերուեցաւ: Իսկ Նիկոլ պահեց ինք զինքը ժողովրդեան զայրոյթին առջեւ:

Երբ պարոնաէրըն զայն լուաւ  
Բնաւ այլ ժամըն չըմբտաւ:  
Վախեց ու ի խուցըն արգելաւ,  
Տասնուչորս շարաթ ի դուրս չելաւ:

Չուր տեղ կը դիմէր Նիկոլ այս առանձնութենէս նուիրակին՝ հայցելու միջնորդութեամբ իւր աղագականներու ներողամտութիւն. «Թէ թող զյանցանս իմ շարաշար»։ «Իսկ նա բնաւ նմա չի լուաւ»։ Եւ կը պնդէր թէ «ես զնա դատիմ ըստ օրինաց»:

Երկրորդ անգամ ալ դիմեցին Նիկոլի աղագականները նուիրակին: Սիմէոն դպիր կը գրէ (էջ 207—208):

Ունէր նա շատ աղգ եւ աղին,  
Որ հաւասար է կէս քաղքին.  
Ամէնք ժողովան ի միասին,  
Անկան ի յոտք Նրվիրակին.  
Ասեն. Գրթա Պարոնտիրին.  
Վասն Աստուծոյ եւ մեր խաթրին.  
Չի է մանուկ տիս հասակին.  
Նըստեալ էմբով փատրշահին:  
Չըլնի թէ տայ տեղ սասանին,  
Հակառակի հետ մեր աղգին.  
Ունիմք մեք շատ շար թըշնամի,  
Չերթայ նոց նոսա միաբանի:

Այս նկատողութեանց առջեւ կակղեցաւ նուիրակին խտասարտութիւնը. յօժար ցուցուց ինք զինքը կանչել զՆիկոլ իր քով եւ «սիրով սրտիւ հաշտել ընդ նա»:

Հաղիւ լսուած էր նուիրակին այս զիջող տրամադրութիւնը քաղաքին մէջ.

Որ տեղ որ կայր հանած վարած  
Շուտ մէկմէկի արին իմաց:

Սուժանը խմբովին խուժեց նուիրակին պալատը. աղագականերով լսելի ընելու իւր կամքը, որ հակառակ էր ամէն հաշտութեան: Լուուեցան ի մէջ սյուրց սպառնալից խօսքերս.

Եւ թէ հաշտիս դու ընդ նմին,  
Մենք կ'ուրանամք զէջմիածին.  
Չքեզ կու ձգեմք վրայ երեսի,  
Կ'առնեմք նման Նիկոլայի:

Սարսափահար եղած այս սպառնալիքներէն

ըէն «երկշոտ հոգի» նուիրակը, միւսանդամ «հրաման արար տունս ամենին — թէ մի ոք ընդ նա խօսեցցին»:

Վերջին փորձն ըրաւ Նիկոլ: Իւր փեսան էր Յակոբշայի որդին Պր. Սահակն, որուն համար կ'ըսուէր թէ «էր խիստ երկիւղած եւ անուանի — շինող վանացըն Սուրբ Սաշի»:

Զասիկա միջնորդ ուղարկեց եպիսկոպոսը նուիրակին, խոստանալով անոր միջնոցաւ տալ յանուն էջմիածնի 500 դուռուչ եւ այլ խաչեր եւ սկիհներ, եթէ յանձն առնէ հաշտարար հանդիսանալ իր եւ ժողովրդեան մէջ: Բայց տէր Սաշատուր «չըմբոնեց» վէճին առած հատու ընթացքը. չլսեց նաև քաղաքապետին եւ Պլէցքի մեծ Տիկնոջ աղաչանքը, որոնք կը խնդրէին իրմէ թէ «թող զյանցանս իբր ճահիլին»։ Նա յամառեցաւ. ինչպէս Սիմէոն կը գրէ. «ինստ արաւ ի իւր մըտին»:

Փոխանակ չըմեղելու «ճահիլին» յանցանքները.

Գարձեալ հրաման Եհան կրկին,  
Որ ամէնք զան վըկայ լինին,  
Քաղաքացիք եւ զըրեսցին,  
Ասեն զամէն վրաս Նիկոլին:

Բոլոր ամբաստանութիւնները խնամով գրի առնուեցան. այս ամբաստանադիրն ապա «ի դուռն ժամուն զարկին», աւելի յայտնանախատ ընելու եպիսկոպոսն եւ ժողովուրդին զայրոյթը աւելի հրահրելու համար:

Երբ կը լսեն զայս եպիսկոպոսին քոյրերը՝ կը վազեն Աւագերէցին խափանելու այս անարգանքը: Բայց երեսփոխանութիւնը անունկնդիր կը մնայ ամէն աղաչաւոր ձայնի.

Ասեն. կ'ուզէ թող թուրք լինի.  
Մէկ մարդու պակսին ի՞նչ լինի:

Զայրոյթն այստեղ կանգ չառաւ. «Հայոց աղայք եւ քահանանին» խորհեցան չար խորհուրդը եւ գացին կեղեցեւոյ դռները «մեծ մեծ կողպէնքերով» ամբափակեցին, որպէս զի եպիսկոպոսը, որուն քով կը գտնուէին բանալիները, չկարենայ մուտ դործել կեղեցին:

Այժմ միայն խելահաս եղաւ Սաշատուր վարդապետ, թէ ինչ անդունդի առջեւ բերաւ հասցուց նաւը, որ կը զեկավարուէր ամբոխին խորհրդով: Յուսահատ իրաց առած դահավէժ հոսանքին առջեւ, թօթափեց օձիքն ու յայտարարեց. «Անպարտ եմ ես ի մեղադրութենէ դորին. դուք գիտասջիք»:

Յուսահատական էր նաև Եպիսկոպոսին  
դրուելիս: Կը լրանար հարիւրերորդ օրը,  
որ նա կը դռնուէր բանտարկուած իւր սենե-  
կին մէջ: Ամէն փորձ հաշտութիւն կնքելու  
ժողովրդեան հետ, վիժած էր անհետեանք:

Ասաց. Ամբոխն է թշնամի,  
Եւ նըւիրակն կողմըն նոցին.  
Ազգականացս եմ առելի,  
Քահանայք տան վըճիւ ինձի:

Երբ հասաւ իր ականջին լուրը, թէ իր երեսին  
նաև եկեղեցին փակեցին, որոշեց վերջին յու-  
սահատական քայլն առնել, յուսալով դռնել  
ելք մը անել կացութենէն:

Որովհետեւ էջր ուզած ժողովուրդը տեղի  
տալ իւր յամառութեան եւ նուիրակը կակղել  
իւր խտարարութիւնը, չըլլալու համար  
«գետնի հաւատար», առաւ ճգնաժամային  
քայլը: Գնաց «առ եկեղեցականս Փռանկաց»  
եւ յայտարարեց թէ պատրաստ է ինքը մտնել  
ի միութիւն Հոռոմէական Ս. Եկեղեցւոյ  
հետ, եթէ յանձն առնեն անոնք օգնել իրեն  
ձեռք բերելու եկեղեցին եւ պաշտպանել զինքը  
իւր հակառակորդներուն առաջ: Անոնք յանձն  
առին: Սիմէոն դպիր կը գրէ.

Եպիսկոպոսն այն խիտ թերի,  
Հարեղայիւքն ամենայնի,  
Մըտան Լեհու եկեղեցին.  
Երզուան լինել կրօնըս Փրտանկին:

Նիկողայոս եպիսկոպոս իւր հաւատոյ դա-  
ւանութիւնը տուաւ 1630 Օգոստոս 30ին:  
Վարդան Յունանեան կը գրէ<sup>17</sup>. «Նիկողայոս  
Թօրոսովից... արար հանդիսապէս աստ զդա-  
ւանութիւն կաթողիկէ Եկեղեցւոյն Հոռոմայ,  
յամի Տեառն 1630... հանդերձ քահանայիւք,  
որոց աւագերէց էր տէր Զաքարիա»<sup>18</sup>. իրեն

<sup>17</sup> Հմմտ. Կամենից, էջ 126:

<sup>18</sup> Զաքարիա աւագերէցի մասին կը գրէ Մկրտիչ  
գրիչ որդի Ղազարի էջմ. 778 Կանոնագրերն Յիշատա-  
կարանին մէջ, գրուած 1635ին ի Լվով. «Յանկացող  
եղե... աստուածասէր եւ բարեպաշտ... եւ արեւմտեան  
հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ տէր Զաքարիայ  
Լովա քաղաքի աւագ քահանայն, որդի տէր Գարար  
նոյն քաղաքի աւագերէցու. որ եւ աս ամենայն բարե-  
ձեռութեամբ հովուէր գհաւա Քրիստոսի ի կեանս  
իրում. եւ կատարեալ արեւաք վճարեաց զկեանս  
իւր... Բայց զբեցաւ աս ի շարացեալ եւ ի բազմահա-  
յած ժամանակ, որ էր վասն ուղղափառ հաւատոյ  
Հայաստանեաց եկեղեցւոյ, ի քաղաքն Լով կոչեցեալ,  
ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին... Գարձեալ...  
որ կարգալով օգտիք եւ կամ արեւմտեան ի սմանէ, մի  
մտանայք յիշել ի Քրիստոս գլխաւորութեանեալ տէր  
Յաքարիայն, որ բազում աշխատութեամբ եւ ջատագո-  
վութեամբ պարգեաց եւ սքազբեաց գլխունս: Եւ յա-  
ւելեալ ի նոյն՝ ցամկ գեղեցիկ նորայարմար ի վերայ  
այրուրեանի, վասն զիւրաւ գտանելոյ կամեցողին զյսբն-

հետ էին Անտոն Սարաֆովիչ, Ռուփրիոս Սա-  
չերեսովիչ, Զոսիմոս սարկաւազ, Ստեփանոս  
Յակոբովիչ եւն: Իսկ Ստեփանոս Ռոշըա եր-  
կրորդ անգամ պահանջուած դաւանութիւն  
մականարկելով կ'արձանագրէ իւր ժամանա-  
կադրութեան մէջ<sup>19</sup> յամն 1630. «Հոկտ. 22.  
Տէր Նիկողայոս Թորոսենց... զդաւանութիւն  
ուղղափառ հաւատոյ արար ի Լէօպոլիս՝ ա-  
ռաջի Պ. Պ. Միքայելի ad Annunciatione Բրո-  
վէնցեալին Կարմելիդաց Եղիսայի a SSmo Sa-  
cramento Բրիօրին Կարմելիդաց Լէօպոլիս եւ  
Տ. Թօմասու էլժանովսքի Յիսուսեան եւ այլոց  
բազմաց»:

Այս առթիւ կ'ողբայ Սիմէոն դպիր Եպիս-  
կոպոսին առած քայլն, եւ ի մէջ այլոց կը բա-  
ցադանչէ.

Ո՛հ, ո՛հ, թէ ի՞նչ բան քեզ արարին.  
Հաղար ախտո՛ւ քո սուրբ հօտին.  
Աստուած առնէ վրէժ նոցին,  
Որ դքեզ ի քո հօտէն հանին:

Եկեղեցին, որ հայ դատաւորներու կող-  
մէն փակուած էր ամբարիակ կղպանքներով,  
բռնի ուժով բացուեցաւ եւ յանձնուեցաւ  
Եպիսկոպոսին: Ստեփանոս Ռոշըա<sup>20</sup> յամն  
1630 հետեւեալ մանրամասնութիւնները կը  
հաղորդէ Եկեղեցւոյ զրաւման մասին. Նիկո-  
ղայոս եպիսկոպոսն «ժողովեալ զգորականս  
ոմանս եւ զպրոցականս Լեհաց, հանդերձ  
քահանայիւք եւ մեծամեծօքն Լատինացւոց  
դայ աս մեծ դուռն Եկեղեցւոյն. եւ զհայրա-  
պետական զգետնն զբեցեալ՝ հրամայէ ա-  
րուեստաւորաց բանալ. որոց բացելոյ՝ ինքն  
սկսանելով դերզն «Զքեզ Աստուած դովեմք»  
մտանէ յեկեղեցին երգօք եւ նուագարանօք,  
դոճանալով զԱստուծոյ. եւ յետոյ տիրէ բո-  
վանդակ դանձուց եկեղեցւոյ»:

Այժմ կարգն եպիսկոպոսին էր ցուցնելու  
ժողովրդեան իւր դաւանութիւնը: Արզիւնց այն

գրիւն իւր: Այլ եւ զպարկեշտ եւ հեղահողի զկեն-  
կիցն իւր Կուրաֆ խաթունն. եւ զբողոքեալ զաւակքն  
իւրեանց զԱնդրեան եւ զՍաքոն, զԳարարն եւ զԳրե-  
զօրն: Եւ զգետնեքն՝ զԱնան, զՍոփիայն եւ զԿատար-  
րինէն: Այլ եւ զվերափոխեալ հայն իւր գաէր Գարար  
աւագերէցն եւ զմայրն իւր Անաստասիայն եւ ի Քրիս-  
տոս հանդուցեալ զեղբայրն իւր Ստեփանոսն եւ զմիւս  
զկենդանի եղբայրն իւր զԳարրիէն. եւ զբրեքն իւր՝  
զՈւլիանէ եւ զԵղիսայի, եւ զամենայն արեան մե-  
ծաւորսն»: Զաքարիա վահճանած կ'երեւայ յընթացս  
1635 ասրւոյն, ձեռագրին օրինակութեան աւարտէն  
(21 Գեկտ. 1635) յառաջ: Մկրտիչ գրէ Վկայութեամբ  
սոյն Զաքարիա աւագերէցին գործն է Կանոնագրոց  
սկիզբը տեսնուած Նիւրբրու այրութեանկան ցամկը:  
<sup>19</sup> Հմմտ. Կամենից, էջ 138:

<sup>20</sup> Անդ, 138:

երէցներուն եւ արեղաներուն, որոնք չուզե-  
ցին հպատակիլ իր իշխանութեան, կատարել  
որ եւ է եկեղեցական պաշտօն կամ մատակա-  
րարել սուրբ խորհուրդները: Նորածինները  
մնացին անկնունք, մեռեալները՝ անթաղ:  
Նոյնպէս ժողովուրդը, որ ընդդիմացաւ եպիս-  
կոպոսին, մնաց եկեղեցիէն հեռու:

Սաչատուր վարդապետ, որ այժմ ա-  
ռանձնացած էր Ս. Սաչ վանքը, դեռ ժամա-  
նակ մը հանդիսատես եղաւ անցուղարձնե-  
րուն: Չէր յուսար ինքը թէ այսպիսի վախ-  
ճան պիտի առնէին վէճերը: Սիմէոն դպիր  
կը գրէ.

Իսկ նըւիրակն յորժամ լսեց,  
Զմարն եւ զմօրուքն իւր ճողեց.  
Քովըն նստած զՀայքն վարեց,  
Զպատճառ եղողնին անիծեց:

Յուսախարուած էր նաև ժողովուրդը:  
Սիմէոն դպիր անոնց բերնէն կը հիւսէ ողբս  
(էջ 210).

Հայերն լալով հառաչէին  
Առ նըւիրակն երթային,  
Ողբալով յոյժ յոյժ կակծաղին,  
Աղիողորմ դայս ասէին.  
Տէր Սաչատուր այդ զի՞նչ արիր.  
Դու մեր վրովն ի՞նչ բան բերիր.  
Միթէ առ մեզ վասն ա՞յն եկիր,  
Որ զմեր ժամերն խլել տայիր:  
Է՞ր դու չար մարդկանց լսեցիր.  
Նոցա խրատօքն ի շուրջ եկիր.  
Միշտ ըզնիկօրն դատ քաշէիր,  
Եւ հազար գէջ նմա ասէիր:  
Քեզ ի՞նչ պիտէր ի Լով դալու,  
Կամ թէ զնա կարգէն ձգելու.  
Գիտէիր դու զնա շահելու,  
Եւ դայս չար բանն չերկարելու: ...  
Լաւ էր զմին չարն շահէիր,  
Քան զմեզ զամէնքս կորուսիր.  
Յեկեղեցեացն զրկեցիր,  
Զմեզ այլազգեաց ձեռք մասնեցիր:  
Էջմիածինն այլ խտոր արիր,  
Քու մուրառիւղ այլ չհասիր,  
Զմեզ հօգուով մարմնով կորուսիր,  
Մեծ փոթորակ թողիր զնացիր:

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻՎՈՍ

Սաչատուր Կեսարացի 1631ին մեկնեցաւ  
Լվովէն, թողլով քաղաքը երկպառակութեան  
մէջ: Անիկա ունէր կաթողիկոսէն յանձնա-

րարութիւն երթալու Հոռոմ եւ բանակցելու ի  
Լեմբերգ հայկական Կղերանոց մը եւ Տպա-  
բան մը հաստատելու<sup>21</sup>: Սաչատուր վարդա-  
պետի այս առաքելութեան մասին ունիմ աչքի  
առաջ հետեւեալ նամակը, ուսկից կը տեսնուի  
նաև Ս. Ժողովին Լեհաստան հարցի հանդէպ  
բռնած դիրքը.

Առ Նուիրակն Լեհաստանի. 4 Ապրիլ 1631:  
Lettere volgari della S. C. P. F. an. 1631,  
T. 11, f. 39:

Ի մեծ գովութիւն Ձեր Սրբութեան եւ  
Ձեր ինամոց կարգացուեցաւ այս Ս. Ժողո-  
վի մէջ Ձեր 29 Յունուար թուակիր թուղթը,  
որուն բովանդակութիւնը Նորին Սրբազնու-  
թեան եւ Տ. Տ. Միրանաւորներուն շատ մեծ  
հաճոյք պատճառեց. ասոր համար հրաման  
ըրին, որ Ձեր Սրբութիւնը հաճի ըստ պատ-  
շաճից իմացնել (մեզ) ինչ որ տեղի կ'ունենայ  
այս միջոցին, այսինքն ինչ պատասխան որ  
պիտի տայ Մովսէս կաթողիկոս ի մասին Լէո-  
պոլսոյ հայ արքեպիսկոպոսին առ նա ուղար-  
կած յօղուածներուն: Որովհետեւ յիշեալ կա-  
թողիկոսին հետ նկատմամբ միութեան բա-  
նակցութիւններ կը վարուին Պարսկաստանի  
Կարմեղեան առաքելութեան միջոցաւ եւ շատ  
կարեւոր պիտի ըլլայ այս միւս ճանապարհով  
թէ ինչ են անոր զգածմունքները այս նիւթի  
մասին: Ասկէ դատ հոս կը գտնուի Բոկոտն  
Կարմեղեան Հ. Թաղէոս, որ երկար ժամա-  
նակ իբրեւ առաքեալ գործած է Պարսկաս-  
տանի մէջ. եւ կը պատմէ թէ այն Սաչատու-  
րին հետ խօսք մէկ ըրած է Հոռոմ իրարու պա-  
տահելու. եւ կը հաւատտէ յիշեալ Հայրը, թէ  
նոյն Սաչատուր Հոռոմ պիտի գար յիշեալ կա-  
թողիկոսի հրամանաւ բանակցելու միութեան

<sup>21</sup> Relatio brevis կը գրէ թէ «Մովսէս Մեծ Հայ-  
աստանի կաթողիկոսն, յաջորդն Մեղեքեղեկի զՍաչա-  
տուր եպիսկոպոս ուրիշ համախ հոգեւորականներու  
հետ 1630ին Հոռոմ ուղարկեց, որպէս զի ըստ օրինակի  
իւր նախորդներուն մատուցանէ Առաքելական Գահէն  
իւր հնազանդութիւնը եւ խնդրէ Առաքելական Գահէն  
Հոգեւոր Գլխանոց մը եւ հայկական Տպարան: Այս  
մասին կան ի Լէօպոլիս Գեր. տեսան Լուդովիսի կար-  
դինալի նամակները ուղղուած առ Մեծապ. Տ. Նուի-  
րակն... որոնց մէջ նաև գլխը. Արքեպիսկոպոսն  
Հայոց կը յանձնարարէ»: Այս մասին այդտ տեղեկու-  
թիւններ առած է նաև ժամանակակից մը, որ կը գրէ.  
«Այլ եւ զայս եւս պատճեաց նոյն այր թէ յորժամ եկն  
Սաչատուր նուիրակն ի Լով, ունէր թուղթ ի ձեռս իւր  
ի յեղթարմայ Փռանդայն թէ այս Սաչատուր Նուի-  
րակն կամի որ ի Հոռոմ երթայ առ պապն վասն միւս  
բանութեան... Ձի Հայոց կաթողիկոսէն երթայ առ  
Պապն վասն միւսբանութեան. զայս այսպէս պատճեաց  
մեզ եկեալն ի Լովայ. բայց զսուսն եւ զճմարիտն ոչ  
զիտեմք»: Հ. Վ. Համամեան, Յուցակ հայերէն ձե-  
սաղրուց Գաղատիոյ, Թ. 54:

մասին: Կրնայ ճիշդ ըլլալ Ձեր սրբութեան ակնարկութիւնն թէ անիկա Կ. Պոլիս մոլորացուած ըլլայ: Անոր համար լաւ պիտի ըլլայ, եթէ Դուք փորձէիք անոր բերանը եւ կամ փորձէիք խօսիլ Լէոպոլտոյ Բոկոտն Կարմեղեանց հետ, որպէս զի աշխատէին զանիկա ուղիղ ճամբան հանել եւ օգնէին անոր, որ ճանապարհը շարունակէ մինչեւ Հոռոմ, վարելու համար այն բանակցութիւնը, որուն շուրջը տուած էին (Սաշատուր եւ Հ. Թադէոս) իրարու մէջ ժամադրութիւն:

Նկատմամբ Արքեպիսկոպոսին բաղձալի էր որ Ձեր Սրբութիւնը օգնէ անոր եւ պաշտպանէ զանիկա թագաւորին քով, որպէս զի խափանուին այն ամէն ձեռնարկները, զորոնք կ'ուզէին ձեռնարկել անոր դէմ հերձուածողները՝ իր հակառակորդները: Այսպէս հրամայեց Նորին Երջանկութիւնը, որ մեծապէս գնահատելով յիշեալ արքեպիսկոպոսին հաւատոյ դաւանութեան գործը, հրաման ըրաւ որ պահուի այն Ս. Հրեշտակապետ Բերդը, այս Ս. Առաքելական Աթոռի ամէնէն կարեւոր գրուածքներու շարքին:

Յանուն սուրբ ժողովին պիտի գրուին անեւ նոյն Արքեպիսկոպոսին գովելու համար անոր սուրբ որոշումը եւ մատուցանելու անոր ամէն աջակցութիւն եւ միջնորդելու թագաւորին քով, որպէս զի չհարաժուր հերձուածողներէն:

Ուրիշ կողմէն ըրէք ինչպէս խոհեմ կը թուի Ձեր Սրբութեան:

Սաշատուր առանց հանդիպելու Հոռոմ վերադարձաւ Էջմիածին զեկուցանելու Մովսէս կաթողիկոսին մի առ մի Լեհաստանի ներքին անցուղարձերու մասին, ինչ լսած էր, տեսած եւ ապրած:

Քիչ յետոյ կը հասնի Էջմիածին Լեհաստանի կողմէն պատգամաւորութիւն մը, որուն անդամներն էին Տէր Սիմէոն քահանայ եւ «Երեւելի այր մի աշխարհական», բողոքելու Նիկիոյցոյ թորոսովիչի արարքներուն դէմ: Բողոքագիրը, զոր ներկայացուց պատգամաւորութիւնս Կաթողիկոսին, թուական կը կրէ 25 Յուլիս 1631. անոր բովանդակութիւնը քաղուածաբար եւ լեհերէն թարգմանութեամբ յառաջ բերած է F. Sachariasewicz 22 եւ անկէ՝ հայերէն թարգմանութեամբ Կ. Եղեան 23: Կա-

22 Wiadomość o Ormianach w Polsce, Lwów 1842, էջ 42—52:  
23 Բոնի միութիւն, էջ Իէ—ԻԸ:

րեւոր կը համարիմ եւ ես գետեղել այս բողոքագիրը այս տեղ ըստ Եղեանի թարգմանութեան.

«... Կաթողիկ եկեղեցականքն Լատինացուց եւ ոստիկանք քաղաքին Իլլովայ Նաղիսեցին զիականս եւ զճիւնիս եկեղեցոյն եւ ի ներքս մուծին զանիծեալն — լաւ էր եթէ կլեալ էր զմեզ Երկիր քան եթէ տեսանէաք զպղծութիւն այնպիսի: Չեպիսկոպոսն ոչ միայն եհան ի մէնջ, ի հարադատ որդուցս Հայաստանեայց եկեղեցոյ, համօրէն զեկեղեցիս, որով խափանեաց զկարգս աստուածպաշտութեան, այլ եւ չտայ իսկ թոյլ թաղել զմեռեալս: Ունի նա զքահանայս մեր, որ հաւատարիմքն իցեն օրինաց մերոց եւ ոչ կամիցինն հնազանդիլ ի յիսանութեան նորա, զան հարկանէ զնոսա եւ կապեալս արկանէ ի բանտ եւ ոչ արձակէ՝ մինչեւ դարձցին եւ ընկալցին զԼատինացուցն զհաւատս: Եւ ոչ ոք է, որ պատժիցէ զնա. քանզի համօրէն ի յիսանաւորք աշխարհայինք եւ եկեղեցականք ի կողմն նորան եւ մանաւանդ Յիսուսեանք: Բողոքելով բողոքեցաք մեք առ արքայ. այլ չեւ է ընկալեալ մեր հրաման յարգարելոյ ատեան հարցափորձից եւ դատաստանի, եւ Աստուծոյ է միայն զիտելի՝ թէ երբ զայն ընկալցուք: Եւ եթէ լինիցի իսկ ատեան դատաստանի՝ ի թիւթամք թէ եւ յայնժամ ոչ դայցէ յերեւան ճշմարտութիւնն. քանզի որ ի Վարչաւայ նստի նուիրակն եւ այլ եկեղեցականք Լատինացուց եւ առաւել եւս Յիսուսեանք յամենայն գորութենէ իւրեանց պաշտպանեն անիծեալ եպիսկոպոսին: Չողաք մեք եւ առ նուիրակն եւ բողոք բարձաք ընդդէմ բռնութեանցս այսոցիկ. այլ նա արար մեզ պատասխանի, թէ չեն կարեւոր իրքն. զի որպէս, ասաց, միջըրտութեամբ աւազանին քաւեցան մեզքն նախկին՝ այսպէս եւ զործք եպիսկոպոսին թորոսովիչի թողան նմա յօրէն, յորմէ հեռէ ընկալաւ նա զմիութիւնն ընդ Ս. Կաթողիկէ եկեղեցոյն Հոռոմայ: Յորժամ խնդրեցաք, զի մեզ, որ քրիստոնէսցքս եմք՝ տացի գէթ մին յեկեղեցեացն՝ ոչ հաւանեցաւ ընդ այս խնդիր մեր արքայն եւ ոչ նուիրակն եւ ոչ քահանայք Լատինացուց, ի ներքս ածելով կանոնս հոռոմէականս՝ թէ ամենայն եկեղեցիք հնազանդին եպիսկոպոսին, որպէս ի յիսանաւորին իւրեանց: Միով ասել բանիւ՝ վարին ընդ մեզ ըստ ամենայնի՝ զոր օրինակ առ աչօք մերովք ընդ եկեղեցոյն Յունաց վարեցան, որ ի քսան ամաց հեռէ ի դուր ճղնի իրաւունս դտանել: Եւ զայս ամենայն առնեն, որպէս զի սկա-

րասցուք տակաւ ի զօրութենէ եւ հաճեցուք ուր ուրեմն մտանել ի միութիւնն»:

Անշուշտ Լեհաստանի հայ թեմին ներքին եկեղեցական դժտութիւնները, ինչպէս նաեւ այն ճոխ թեմին Էջմիածնի նուիրապետութենէն ցաւալի բաժանումը խոր խոցեցին հօտասէր հովուին սիրտը: Փութաց Մովսէս կաթողիկոս դարման մը խորհիլ յանկարծական մրրիկը փարատելու եւ խաղաղ պայմանները վերահաստատելու համար: Սորհեցաւ զիմել թղթերով Ուրբանոս Ը. Քահանայապետին եւ Վլադիսլաւ թագաւորին, հայցելու անոնց միջնորդութիւնը ի զգաստութիւն յորդորելու համար Նիկիոյ եպիսկոպոսը. իսկ հայ ժողովրդեան զրել մխիթարական եւ խրատական թուղթեր 24:

Ինչպէս կը գրէ Դաւրիթեցի (381) ուղարկեց Մովսէս նոյն պատգամաւորութեան ձեռքով «զնամակն խոհական եւ լի իմաստութեամբ, խոնարհ եւ մաղթական բանիւ առ թագաւորն Լեհաց եւ առ նորին իշխանս, եւ առ արքեպիսկոպոսն քաղաքին Իլլովայ որ յաղդէն Փռանկաց, նաեւ առ Փափն. եւ խնդրեաց թէ ողորմեցարուք տառապեալ ժողովրդեանն եւ շորհեցէք զեկեղեցին յինքեանս եւ մի՛ խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցոյ»:

Առ Իննուկենսիրոս Ը. Քահանայապետ թուղթը կաթողիկոսին խնդրանք շարադրած է Նախիջևանի հայ Միաբանողներու արքեպիսկոպոսն Աւգոստինոս Բաջենց 25, որ մտերիմ բարեկամն էր Կաթողիկոսին:

Յառաջ կը բերեմ այստեղ Մովսէս կաթողիկոսին տողերն ուղղուած առ Աւգոստինոս Բաջենց. այս թղթին առաջին մասը գրի առնուած է Սաշատուր Կեսարացոյ թելադրութեամբ. իսկ երկրորդ մասին մէջ կը խօսի ինքնին Կաթողիկոսը 26:

Թուղթ Մովսէս կաթողիկոսի առ Արքեպիսկոպոսն Նախիջևանի (ի գուլիս Բղրայի գտանի կնիք կաթողիկոսին):

Յիսուսի Քրիստոսի նուստ ծառայ, Տէր Մովսէս կաթողիկոսէ ամենայն Հայոց եւ

24 Այս թուղթերու մասին ակնարկութիւն մ'ունի Ստեփանոս Ռոշաւ. «Երարձ, Կրտ, Մովսէս ի շարականէն «Ով հրաշալի նախահարք» գերիս յետին տունն ... որպէս յայտ է ի Բղրայց նորա եւ առ մեր Լեօպոստիս. Կամենից, էջ 138:

25 Աւգոստինոս Բաջենց 1630 Օգոստոս 8ին մեկնած էր Հոռոմ եւ հոն Ուրբանոս Ը.էն ձեռնադրուած արքեպիսկոպոս Նախիջևանի. կը վերադառնայ Նախիջևան 1631 Ապրիլ 1ին:

26 Դիւան Տարածման Հաւատոյ XI, Letteri di lingua straniera an. 1631—1645, fol. 146:

Պատրիարք Վաղարշապատու սուրբ Աթոռոյ Էջմիածնայ. նաեւ ի Սաշատուր վարդապետէ Սպահանու եպիսկոպոսէ ողջոյն եւ սէր հոգեւոր եղբոր մերոյ, տէր Օգոստինոս եպիսկոպոսի Տէր յոյժ խնդալ:

Ծանիր սիրելի, որ դու գիտակ ես Մելքիսէթ անուանեալ կաթողիկոսին այս երկիրս ո՛րչափ չարութիւն եւ ապականութիւն գործէին. թէ այլասեւից կաշառք տալով եւ կապալայով վարել զկաթողիկոսութիւնն, մահաւանդ զեկեղեցին Աստուծոյ ի ներքոյ այնքան ծանր հարկի այլասեւից գրաւելոյ. եւ պարտոյ աղազաւ զնաց վախստեայ ի Լօֆն. եւ անդ տգէտ եւ անուղղա գործօք տղայ մահուկ մի ի, ԻԱ-ամեայ, յաղազս կորուսիչ արծաթոյ եպիսկոպոս է ձեռնադէր, առանց կամաց ժողովրդեանն՝ զիչերով. մինչ իմացեր են՝ սուսերօք եւ բրօք ընթացեր են թէ մեզի պիտոյ չէ, մի՛ աներ. անարժան եւ վատթար է գործօք. նա արած եւ պրծած է եղեր: Յետոյ Կեսարացի Գրիգոր վարդապետն զնացեալ անդ, տեսեալ զայլ եւս վատթար գործն՝ ընդ բանիւ էր արարեալ: Ես Սաշատուր վարդապետս զնացի որ այսպիսի վտանդի մէջ կային. քահանայքն, դատաւորքն եւ միաբան ժողովուրդքն աղաղակէին թէ մեզ պիտոյ չէ. դատաստան թող լինայ. վկայքն զան զգործն վկայեն, թէ արժան է եպիսկոպոսութեան՝ նա՛ ընդունիմք: Նա երկուցեալ ի դատաստանէ՝ զիտելով զվատթար գործն, զեկեղեցակողոպուտ լինեն եւ զյայտնի շուքիւնն եւ զայլ անուղղայս գոր չէ յիշելի: Այլ ճար չիմացաւ. զնաց ի Եէզրիլականն անկաւ, թէ ես Փափին կու հնազանդիմ. ինչ կ'ասէք՝ կ'անեմ. ինձ ընկերութիւն արարէք: Եւ Եէզրիլ-զաներովն Փրանկ պարոնացն մարդ առաւ, եկն բռնութեամբ զեկեղեցոյն նիզն կտորատեցին եւ զեկեղեցին յափշտակեցին, եւ ետուն ի ձեռս այն ամբարիշտ չեպիսկոպոսին: Եւ ստիպէին բռնութեամբ թէ ձեր եպիսկոպոսն Փրանկ դարձաւ. դուք ալ եկէք դարձիք: Եւ ոչ ոք չէր հետեւէր եպիսկոպոսին. նա զքահանայագործութիւնն արգել: Ժողովուրդքն առանց եկեղեցոյ թափառական շուրջ կու գան, զի մէկ էր եկեղեցին. հիւանդքն առանց սրբութեան մեռանէին. եւ մեռեալքն չտային թոյլ թաղման. երախայքն ոչ մկրտէին. քանի մեռեալ ի տունն մնաց անթաղ, ամսով, երկու ամսով: Ձի՛նչ երկարեցից, այնպիսի ազէտ որ Դեկոսի եւ Ուլիանոսի ժամանակն չէր եղեալ. եւ ոչ ի մէջ Մահմեդականաց, զոր

տեսաբ աչօք մերովք ի մէջ քրիստոնէից: Իսկ առ մեզ թէ զի՛նչ անցք անցուցին, ոչ (յօր. որ) կարեմ ընդ գրով արկանել. հերձուածող ասելով եւ չաշուտ անուանելով. եւ զայլ ոչ երկարեցից:

Դարձեալ ի Մովսէս կաթողիկոսէս ծանիր, Տէր Օգոստինոս, դու գիտակ ես որ մեք ձեր պատրոնց սրչափ հարկին հանեմք: Այլ խնդրք մեր ի քեզանէ այս է, որ մարդ պիտի ուղարկեմ ի Փափն, հրամանքդ զահմաթիս գրես առ Փափն եւ ծանուցանես մի ըստ միովէ զմեր լաւութիւնն որպէս գիտակ ես. եւ զնոցա արարեալ չարութիւնն, եւ խնդրես որ զեկեղեցին յետ դարձուցանեն, եւ զմեր ժողովուրդն չի նեղացնեն, եւ Նէղովթաներուն սաստ գրէ որ մեր ժողովուրդեան հետ բան չունենան: Եղբայրաբար մեք այս տեղս հետ ձեզ սիրով կենամք եւ նոքա անդ: Թէ Փափէն ճար մի եղաւ, որ զչարն խափանեց, բարի. ապա թէ չէ մեղքն իւրեանց վիզն. մեք այլ զմեր գիտցածն կ'անեմք: Ապա դու միջնորդ լեր գրով եւ խաղաղարար լեր. զի որդի Աստուծոյ կոչեցես. բաւ է:

Ձինչ գիր որ գրես Փափին, նա՛ զսուրաթն հանես, որ իմանամք թէ ի՛նչ ես գրեր. որ զՓափին գիրն զմտով մօհրես որպէս օրէն է, եւ ուղարկես առ մեզ, որ մեր հաւատարիմ մարդովն ուղարկեմք առ Փափն: Ողջ եր ի Տէր. բաւ է. զայս բանս շուտով հոգաս, սիրելի:

Պատգամաւորները ծանրաբեռնուած թղթերով վերադարձան Լվով եւ յանձնեցին թղթերը նշանակեալ հասցէներուն:

Թագաւորին ուղղուած թղթին լեհերէն թարգմանութիւնը հոգացին տեղւոյն Հայերը: Այս թուղթին հայերէն խկազիրը կը պահուի մինչեւ այսօր ի Վարչաւ<sup>27</sup>: Անոր հրատարակութիւնը առաջին անգամ տուաւ Մ. Մսերեանց<sup>28</sup>. որմէ արտատպեց ապա Հ. Ա. Ալիշան<sup>29</sup>: Թուղթն գրուած է 1632, Օգոստոս

<sup>27</sup> Archivium Gláwnoe, p. 1. Ժամանակա Պետերբուրգ տարուած եւ պահուած Պետական գիւտանասան մէջ ընդ համարաւ 13: Իսկազիրն օրինակութիւն մը ունիմ առկես կատարուած ձեռամբ Հ. Վարդան Վ. Մեղիսեղեկեանի: Կոնզակին նկարագրութիւնն է. Մեծութիւն՝ 53 X 28 հմ.: Գրութիւն՝ 41 X 21.5 հմ.: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ նոսր: Զարդ՝ լուսանցքները կարծիր կրկին զծերով եզերուած: Վերջը կը գտնուի կաթողիկոսական կնիքը կարծիր թանաքով կոխուած, կտր 4 X 4 հմ., գաղտի ամբողջ շերտի մը մէջ տեղը, որ կարծիր, կապոյտ, վարդագոյն եւ սպիւն գոյներով է:  
<sup>28</sup> Ճոսրագ, 1860, էջ 72—76:  
<sup>29</sup> Կամենից, էջ 241—243:

30ին «ձեռամբ» Մովսէս կաթողիկոսին. ուր կ'ըսուի.

«Ճին եհաս լուր ի լսելիս մեր վասն նեղութեան ազգին մերոյ որ կան ընդ հովանեալ Ձերում թագաւորութեանն, մանաւանդ ի մայրաքաղաքն Լեվ, թէ զեկեղեցիս առեալ են բռնութեամբ ի ձեռաց ազգիս մերոյ, եւ քահանայք եւ ժողովուրդք շրջին իրբեւ զոչխարս մոլորեալս՝ որոց ոչ իցէ հովիւ. զոր ոչ կարեմ մի ըստ միովէ յերկանել քո սուրբ թագաւորութեանդ վասն աղէտից: Եւ մեք յորմէ հետէ զայսպիսի իրս լսեալ եմք, կսկիծ եւ տրտմութիւն եւ նեղութիւն շատ ունիմք՝ քան զայս որ յայլասեռիցս կու կրեմք: Վասն որոյ հարկ եղեւ ինձ գրել առ աստուածապաշտ նորածին թագաւորութիւնդ, շնորհաւորել: Եւ խնդրեմք ի քէն լալազին պաղատանօք, լուր աղաչանաց մերոց եւ խնդրուածոց. մի՛ եւ մի՛ եղիցի այսպիսի իր ի միջի Ձերում. եւ մի՛ զնել զվէրս ի վերայ վերաց եւ խարան ի վերայ խոցից. եղիցի սէր եւ խաղաղութիւն ի միջի մերում... Հայցեմք ի մեծութենէդ Ձերմէ՛ գիտքրիկ հօտն զայն, այս ինքն զազս մեր խնամով եւ սիրով պահեցես վասն սիրոյ նախնեացն քոց, եւ մի սուտակասպասաց բանիւք վերաւորեցես զնոսա»:

Արդեամբք ալ Վլատիսլաւ թագաւոր ուզեց անձամբ միջնորդ ըլլալ, որ վերադարձուի եկեղեցին Հայոց. բայց Յիսուսեանք յայտնեցին թագաւորին, որ խնդիրը եկեղեցական ըլլալուն, պատեհ չէ որ աշխարհական իշխանութիւնը միջամտէ. անոնք չթողուցին նաեւ որ եկեղեցական իշխանութիւնը դատն ի նպաստ Հայոց վճռէ:

Ստիպուեցան Հայք խնդիրը Հռոմի առջեւ հանել. Սիմէոն քահանայ, որ պիտի ուղեւորէր Հռոմ, յանձնելու Քահանայապետին Մովսէս կաթողիկոսին թուղթը, ընկերակցութեամբ ուրիշ պատգամաւորներու մեկնեցաւ դէպի Հռոմ: Ունէին իրենց հետ նաեւ թագաւորի եւ քաղաքին արքեպիսկոպոսի կողմէն «թուղթն բարեխօսութեան» (Դաւր. 382): Անոնք հասան Հռոմ եւ մատուցին սրբազան Քահանայապետին «նախ զխնդրանաց թուղթն Մովսէս կաթողիկոսին եւ ապա զԹագաւորին եւ զԱրքեպիսկոպոսին» (Դաւր. 382):

Առ Քահանայապետն Ուրբանոս Ը. ուղղուած Մովսէս կաթողիկոսի թղթին համառօտութիւնն է հետեւեալը.

Քաղուածք էջմիածնի Մովսէս կաթողիկոսի 19 Օգոստ. 1633<sup>30</sup> առ Ուրբանոս Ը. Քահանայապետ գրած նամակէն:

Archivio Prop. XI. Letteri di lingua straniera an. 1631—1645, fol. 155:

Կը խնդրէ Քահանայապետին պաշտպանութիւնը ի նպաստ Լեհաստանի Հայերուն: Ուղարկած է իւր մէկ նուիրակը՝ Տէր Ուաշատուր (Լեհաստանի) Լվով (քաղաքը) եւ Կամենից եւ Լեհաստանի այլ մասերը իրբեւ այցելու: Կաթողիկոսը ընդունած է Քահանայապետին նուիրակները մեծ բարեացակամութեամբ. հիւրամեծարած է նաեւ Դոմինիկեանները (Մխարանողները) իրբեւ եղբայրակիցներ: Նոյն վերաբերմունքը կ'ակնկալէ (փոխադարձարար) Լեհաստանի Հայոց համար:

Իւր նուիրակը կրած է նեղութիւններ եւ անհարթութիւններ Տէր Նիկողայոս անարժան եպիսկոպոսի կողմէն. որ բանադրուած է. որ եպիսկոպոսութիւնը ձեռք բերած է սիմոնիականութեամբ. որ շատ անգամ էջմիածին կանչուած է, բայց միշտ գանուած է անաստող եւ ժողովուրդեան ու կղերին մէջ անհամաձայնութեան պատճառ: Եկեղեցիները փակել տուած է եւ խափանած սուրբ խորհուրդները. եւն եւն: Մեռելները մնացած են անթաղ: Շատ պիտի բողոքար անձամբ զալ առ ոսոս սրբազան Քահանայապետին. բայց հնարաւորութիւն չկայ: Կ'ուղարկէ իւր կողմէն Տէր Սիմէոն իւր սիրելի որդեակը, Լեհաստանի ազնիւ հայ երէցը, որ եկած էր կաթողիկոսին իրբեւ պատգամաւոր նոյն ժողովուրդեան, խօսելու համար նոյն եպիսկոպոսին մասին:

Նամակին վերջը կ'ըսէ. կ'ապրինք սուրբ, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցւոյ հետ համամիտ. կը նղովենք բոլոր հերետիկոսները՝ զԱրիոս, զՄակեդոն, զՆեստոր, զՆեւոլիքս եւ բոլոր անոնք, որոնք համակարծիք են յիշեալներու հետ:

Նամակին կը կցուի հայերէն հետեւեալ հասցէագիրը.

«Հասնի պրակս ի մեծ մայրաքաղաքն Հռոմ, առ ձեռն մեր հոգեւոր երիցագոյն եղբորն տիեղերալուր եւ հռչակաւոր սուրբ Հայ»

<sup>30</sup> Թուականը պէտք է իմանալ անշուշտ 1631, Օգոստոս 19:

րապետին Տեառն Տեառն Ուրբանոս ութերորդ ամենայն Փրանկաց ի բարին. ամէն»:

Ս. Ժողովը կը պատասխանէ առ այս.

Առ կաթողիկոսն Հայոց. 3 Սեպտ. 1633: Lettere volgari della S. C. P. F. an. 1633, T. 13, f. 96:

Լէոպոլտոյ հայ արքեպիսկոպոսի խնդրոց մասին Սրբազան Քահանայապետը կարգադրած էր Ասպահանի Տ. Եղ. Յովհ. Թաղէոսին, որ բանակցի Ձեր Սրբութեան հետ եւ դրած էր առ այս համառօտագիր մը: Ինձ հարկաւորութիւն չի մնար այլ եւս Ձեր Երանութեան առ Նա գրած թղթին, զոր ուղարկած էիք ի ձեռն Սիմէոնի, ի պատասխանի յաւելուլ, բայց եթէ այն թէ Տէր Յովհաննէսն, որ արդէն մեկնած է, լիովին պիտի տեղեկանաք Նորին Սրբազնութեան մտքին: Ուստի եւ ուրիշ ըսելիք չունիմ:

Նիկողայոս Թորոսովիչ երբ լսեց թէ ժողովուրդը պատգամաւորութիւն մ'ուղարկած է Հռոմ, աճապարեց եւ ինքը մեկնել Հռոմ: Կը գրէ Դաւրիթեցի թէ ի Հռոմ «անիրաւ Եղվիդայքն» դարձեալ եպիսկոպոսի կողմը պաշտպանելով՝ «նորհակացան Հայոց եւ ձախ(ող)եցին զբանս նոցա. որ ոչ եղեւ տուեալ եկեղեցին» Հայոց. որ եւ ունայն դարձան<sup>31</sup> ողորմելի ժողովուրդքն (պատգամաւորքն) եւ եկին յիլով»: Իսկ Եպիսկոպոսը դարձաւ Հռոմէն յաղթանակաւ<sup>32</sup> եւ «կայր, ինչպէս կը գրէ Դաւրիթեցի (232), ըստ առաջին կարգին՝ վտանգելով զժողովուրդսն եւ եւս ահառակութեամբ»:

<sup>31</sup> Ս. Ժողովի որոշմանց մէջ կը կարգւած. «Կարգիմալ Անտոնիոյ զեկուցում ըրաւ Հայոց Մովսէս կաթողիկոսի թղթերու մասին, որոնք կը հայէին Լեոպոլտի հայ արքեպիսկոպոսի խնդրոց, որ Հռոմէական Ս. Եկեղեցւոյ հետ միութիւն ըրած էր: Ս. Ժողովը կը համարէ թէ պէտք չկայ մասնաւոր պատասխան մը տալ Կաթողիկոսին եւ Լեոպոլտի Հայերուն, որոնք բաժնուած հետացած էին միացեալ արքեպիսկոպոսի հնազանդութենէն եւ նոյն միացեալ արքեպիսկոպոսի գէմ են»: Ժողովը 182, զուժարեալ առ Սրբազնութեան 29 Սեպտոմ 1633. P. S. C. de Prop. de Fide, an. 1632—1638, T. 8, p. 296:

<sup>32</sup> Ստ. Ռոշքա, յամն 1632 կը գրէ. Նիկողայոս արքեպիսկոպոսն Լեոպոլտի Հայոց առեալ ի Վլատիսլաւ Նիկիզմունի թագաւորէն Լեհաց զձանապարհաբեր, զայ ի Հռոմ առ Ուրբանոս Փափն, տալով նմա պատրաստական հնազանդութիւն, զոր մեծաւ պատուով ընկալաւ Սրբազան Փափն. շնորհեաց նմա զեմիփորն արքեպիսկոպոսեան, եւ կոնտակաւ մակագրեաց զնա արքեպիսկոպոս Լեոպոլտի եւ բոլոր թագաւորութեան Լեհաց եւ մեծի դատութեան Լիթվանաց ազգին Հայոց: Եւ այսպէս մեծարեալ դատնայ յաթոնս իւր»: Կամենից, 139: — ձանապարհաբերն պատճենը 5 Յուլիս 1632 թուակիր տե՛ս Relatio brevis:

Այսպէս կենտոս վիճակի մէջ էին Լեհաստանի ինքնիշխանները, երբ վախճանեցաւ Մովսէս կաթողիկոս: Իր յաջորդն Փիլիպպոս կաթողիկոս շարունակեց բանակցութիւնները թղթերով եւ պատգամաւորներով մէկ կողմէն Լեհաստանը եւ միւս կողմէն Հռոմի հետ: Հասցիւ 1653ին յաջողեցաւ Փիլիպպոսի խողով հասնի վրայ հասնել վէճերը եւ ժողովուրդին եւ Եպիսկոպոսին մէջ հաշտութիւն մը գոյացնել: Յովհաննէս Վ. Արդնցի իւր խոհեմ եւ իմաստուն ընթացքով մեծապէս նպաստածատոյց եղաւ այս խողովութեան գործին:

Զմեղ այս տեղ չեն հետաքրքրեր Նիկոլ արքեպիսկոպոսի պատմութեան անդրագոյն շրջանի դէպքերը, որոնք տեղի ունեցան 1634էն ետքը:

Յետահայեաց ակնարկ մը կը բերէ զմեզ այն համոզման, թէ իրերը պիտի չառնէին այն ընթացքը եւ պիտի չյանգէին այն հետեւութեան, ուր թողուցինք, եթէ Գրիգոր Կեսարացի եւ Պապական վարդապետ գիտնային կանոնախն ճանչնալ 25ամեայ եպիսկոպոսին նկարագրի թերութիւնները, եւ իրրեւ դաստիարակ ջանք տանէին մատաղատունկ ծառին ծուրթիւնն ուղղել քան արմատէն ի բաց խլել, երբ մանաւանդ օտար հողի մէջ ձգուած էին անոր խիղբերը, ուրիշ հիւթով սնած, ուրիշ կլիմայի տակ աճած, ուրիշ շրջանակէ շրջապատուած: Պիտի ըսեմ, որ երկպառակութեան սերմը յանձնեց հողի Մելքիսեդեկ կաթողիկոս, Գրիգոր Կեսարացի ջուր տուաւ անոր եւ աճեցուց Պապական վարդապետ:

Արտաքին՝ ոչ քաղաքական եւ ոչ եկեղեցական կողմէ միջամտութիւն տեղի չունեցաւ կուսի բովանդակ ընթացքին: Երբ արքեպիսկոպոսը գիմեց արտաքին պաշտպանութեան, յայտարարելով ինքզինքը կաթողիկէ, գտաւ աջակցութիւն: Որովհետեւ ունէր ձեռքը թաղաւորական հաստատագիր, ուր կը ներկայանար Լեհաստանի մէջ ապրող Հայերու օրինաւոր հովիւ, թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական իշխանութիւնները պաշտպան հանդիսացան իր իրաւունքներուն: Մովսէս կաթողիկոս գտաւ ինքզինքը կատարուած իրողութեան մ'ատջեւ. իր ոյժը չզօրեց հոսանքին ստաջն առնել կամ ուրիշ ընթացք տալ իրաց:

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



**ԹԻ ԻՆՉՊԵՍ ԿԸՉՄՈՒԵՑԱԻ ՀԱՅ ԱՉԳԸ ԸՍՏ ՏԵՍՈՒԹԵԱՆ Հ. Ն. ՏԱՅԵՆԻ\***

Իմ դիտողութիւնէս ի մասին «Վերք» անունն՝ չի հետեւիր թէ ես Հայերը Փոխդպրի կը նկատեմ: Յունական այս աւանդութեան դէմ որոշ գրած եմ արդէն գործոյս մէջ՝ «Ուսումնական հայերէնի». զլ. Լեզու փոխադրուց:

Հայ ազգը կազմած են այլ եւ այլ տոհմեր: Ասոնց մին կամ միւսը կրնայ Արեւմուտքէ եկած ըլլալ, ժամանակ մը Փոխդպր բնակած ու անցած Փոքր ու Մեծ Հայք: Բայց անհատական կը դտնեմ այն կարծիքը, թէ ամբողջ Հայ ժողովուրդը Փոքր-Հայք բնակած ըլլայ եւ մեծ Հայք անցած կամ ստիպուած անցնելու՝ Գամբաց (Կիմմերացուց) արշաւանքին հետեւութեամբ: Արդ Գամբաց արշաւն եղած է՝ անցնելով Կաւկասն ու Արեւելեան Հայաստան՝ դէպ ի Իրան: Յետոյ միայն Իրանէ անցած են Կենդրոնական եւ Հարաւային Հայաստանի վրայէն դէպ ի Փոքր-Հայք ու Գամբիք (Կապպադովկիա): Որովհետեւ արշաւն եղած է Արեւելքէ դէպի Արեւմուտք, անկարելի է, որ Հայ ժողովուրդը մղուէր Արեւմուտքէ դէպի Արեւելք: Հայք թէ ի Փոքր եւ թէ ի Մեծ Հայք կը նստէին անշուշտ՝ ինչպէս Գամբաց արշաւէն ետքը՝ նոյնպէս սպասովապէս անկէ յառաջ: Բայց կարելի է որ Հայոց այն մասն՝ որ Հալիսի արեւելքը կը բնակէր, մղուած ըլլայ անով դէպ ի արեւմուտքն Հալիսի, ի Փոխդպր, ուր ժամանակաւ ձուլուեցան: Ուստի կարելի է որ յոյն աւանդութիւնն նաեւ (այսպիսի) իրական հիմնունենայ:

Հայոց գլխաւոր զանգուածը՝ Հայք կը նստէին ոչ միայն ի Փոքր-Հայք (ցորչափ ասի Հաթայ «Վերին Աշխարհ») չէր վերաբերեր), այլ նաեւ Մեծ Հայոց լեռնաշխարհի մէջ, գոնէ Արեւմտեան Հայաստան, ո՛չ միայն Գամբաց արշաւէ յառաջ, ո՛չ միայն յառաջ Բան Ուրարտեանց տիրապետութիւնը, այլ նաեւ յառաջ

\* Հետեւեալ տողերը հայերէն ամփոփումն է գերմաներէն նամակի մը, գոր գրած է Ժ. Ն. Տաշեան աւ ուսուցչապետն Յ. Կարսա 26—29 Յունիս 1931 թուականով ի Բաղ-Հայ, ուր կը գտնուէր նոյն ժամանակ օգտուելու համար տեղւոյն գերմանացիներէն: Ամփոփումն կատարուած է հեղինակին ձեռքով: Կը ներկայացնեմ գայն ամփոփոյն, ի բաց յայտարարով միայն մուտքն եւ վերջաւորութիւնը, որոնք կը հային ուրիշ խնդրոց: Հեղինակին մտադրութիւնն էր ընդարձակել տեսութիւնն եւ իբրեւ առաջին քաժին մը կցել «Հաթայ եւ Ուրարտեանք» գործին: ԽՄԲԱԳԸ.

Բան առ հասարակ թրակեան-փոխադրական գաղթականութիւնը դէպ ի Փոքր-Ասիա: Հաթեան բեւեռագիր բնագրաց համեմատ Հայաւայի ժողովուրդն արդէն այնչափ հզօր էր, որ Հաթէի առաջին մեծ արքայն ստիպուած էր դաշինք կուել Հայաշուալի Հուկկանաւ արքայի հետ, որպէս զի ազատ ձեռք ունենայ Միտաննի դէմ: Այս դաշինքը (ԺԱ. դար Ն. Ք.) Բողազքէօյի դիւանին ծանօթ ամենահին դաշինքն է (Hukkaraš հակառակ անունն անանութեան՝ անշուշտ չէ հայ գրուցոց «Հայկ» նահապետը. ինչպէս որ Ուրարտեան Արամէ արքայն նոյն գրոյցին մէջ իբր Արամ կ'երեւայ): Հայաշա անունն ձեւին մէջ (a)ša աւարտ մըն է, որ կայ ուրիշ անուննց մէջ ալ: Ուստի Հայ-արդէն ՓՆ. դարուն կը նստէր ի Հայաստան: Հայ անունն՝ ինչպէս Գուք ալ կ'ընդունելք, լաւագոյն կը մեկնուի Hattis: Արդեօք հին Hattis մէկ մասը Արեւմտեան Հայաստանն անցած էր, երբ Նեշալի թաղաւորք, ուստի հնդիկերոպական Հաթեր՝ գրաւեցին այն մայրաքաղաքը (Ի. դար Ն. Ք.): Կարելի է. բայց ապացոյց չունինք: Բաց աստի չեմ հաւատար թէ Նախահաթեր այնպէս սպասով «ոչ-եւրոպական» ըլլան: Բանի մը բառերու (Glosse) մեկնութիւնը բաւական չէ. եւ առ հասարակ այս խնդիրը նորէն քննելի է: Նաեւ Միտաննիքն այնպէս սպասով «Կաւկասեան» չէ. շատ դիւրութեամբ կարելի է որ ի վերջոյ այս լեզուն իրրեւ հնդիկերոպական ցուցուի. ա՛յս է իմ սպասուածութիւնս այս լեզուի մասին: Յամենայն դէպս Հայաշայի ժողովուրդն Արեւմուտքէն եկած էր. հաթեան բնագիրը կը ցուցնեն թէ ընդհակառակն Հայաշա կը ձգնի Արեւելքէ դէպի Արեւմուտք դիմելու, արշաւանքներ կ'ընէ դէպի «Վերին Աշխարհ», ուստի Կապպադովկիա: Ինչպէս Եռալէ (հայ.՝ Ծոփք), ինչպէս Ալշէ (հայ.՝ Աղձնիք), նոյնպէս Հայաշա (= Հայք) եւն կազմած են հայ ազգին գլխաւոր զանգուածը: Ի հարկէ նաեւ Ուրարտեանք (կամ «Ալարտեանք») կամ Ուրարտացիք: Տակաւին որոշ չէ թէ ուսկի՞ց եկած ըլլան Ուրարտեանք: Բայց ասոնք նախ Վանայ-ծովու շուրջը կը նստէին. եւ ասկէ սկսած են իրենց տիրապետական արշաւանքը: Բայց տիրած են Հայաստանի միայն մէկ մասին: Արեւելք իրենց իշխանութիւնը չէ անցած Այրարատեան դաշտէն անդին. դէպ ի Հիւսիս հասած են Մեանայ լիճը եւ Զարիշատի լիճը (Կարսի հիւսիսը). Հիւսիս-արեւ-

մուտք հասած են միայն մինչեւ Բասեն (Կարին, Դերջան, Եկեղեաց եւն չունին ուրարտեան արձանագրութիւններ): Դէպի Հարաւ միայն հզօր եղած են. եւ Արածանոյ դժով հասած են Եփրատ, ուստի Մեծ Հայոց արեւմտեան սահմանը: Ծոփք եւ Աղձնեաց աշխարհաց համար միշտ կոտուած են Ասորեստանեայց դէմ. տեղ տեղ անշուշտ ուրարտեան գաղթականութիւնը ծագած են. բայց նոյնն ըրած են հոն նաեւ Ասորեստանեայց: Ուստի Ուրարտացիք հոս միայն տիրող խաւն էին. նաեւ Հայաստանի միւս մասերուն մէջ ալ միայն տիրապետողներ եղած պիտի ըլլան:

Հայաշա-ներն ի հարկէ անհետ չէին եղած, ո՛չ ալ նոյնպէս Մանգա-ները՝ Արեւելեան Հայաստանի մէջ: Առ հասարակ այս Արեւելեան Հայաստան (ուստի նաեւ Արարատի դաշտը) անցման քաղաքն էր ազգաց: Իրանեանք եւ Հնդիկք ի Միտաննի, ուստի ի Հիւսիսային Ասորեստան եւ ի Հարաւային Հայաստան, այս ճամբով եկած են: Ուստի Հայաստան սպասովապէս չէր միաձոյլ «ուրարտեան»: Եթէ այսպիսի միաձոյլ ժողովուրդ մ'ըլլար, անհասկանալի կը մնայ թէ ինչո՞ւ Արձանագրութիւնը անընդհատ արշաւանքներ կը յիշեն՝ երկիրն իրենց ձեռքը պահելու համար: Ուրարտեանք «Կաւկասեան» էին: Չեմ կարծեր: Եւ ոչ կարողացած են հասնելու մինչեւ Կուրի գիծը, ո՛ւր մնաց թէ մտնելու բուն Կաւկասեան աշխարհ մը՝ օրինակ ի Վրաստան: Իբր «Կաւկասեան»՝ այս կէտը չի մեկնուիր:

Հայաշայէն եւն ետքը՝ հայ ազգը կազմելու նպատակով են արք աշխարհին Arman (Ուրմիւլ լճին շուրջը): Ասոնք Հայաստան մտած են՝ Մարաց արշաւանքի հետեւութեամբ: Անոր համար Արմանիա, Արմինիա եւն միայն անպան արձանագրութեանց մէջ կ'երեւան. եւ Դարեհի ծանօթ արձանագրութեան մէջ տակաւին մնացած է Ուրուստու (Ուրարտու)՝ Բարեւական խմբագրութեան մէջ:

Կարծեմ թէ J. Marquartի այն գաղափարն ուղիղ է, այն թէ Հայք դիւրութեան գաղթականութիւն ըլլան, գորտնք հոն բերած են Մարք՝ աշխարհը պահելու համար: Միայն թէ անոնք չէին Հայք Արեւմուտքէն, այլ «Արմէնք», այն է՝ արք Արման աշխարհի: Այս բնակչութիւնն անշուշտ երանեան էր. եւ անով կը մեկնուի այն մեծ ազդեցութիւնն, գործըրած է Երանեան լեզուն Հայերէնի վրայ: Այս